



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





# ԾՈՑԻ ԵՐՔԱՐԱՆ



13 APR 2011 ✓ 6 NOV 2011  
X 6986

Թ 1,030 Ընդունելու ԶՈՐԱԿԱՐ ՏԵՐ-ԳՈԼԻԹԵԱՆ ՑՐ

831.99-192

833334

# ԾՈՑԻ ԵՐԳԱՐԱՆ

Ժ Ա Ռ Ա Յ Ց Ց

Կ. ՏԵՐ-ԴԱՌԵԱՆՑ

1001  
1001

Երկող սպազմորին.

(Յ Ա Ր Ե Վ Ա Խ Ա Ֆ Ա Հ Ա Մ Ճ)



Թ Ի Ձ Լ Ի Ռ

Տպար. Վրաց Հրատ. Ընկ. || Տիպ. Գրադ. Իզ. Տ-վա.

Большая Вапсская ул.

1903

20 SEP 2013  
73-252  
83 APR 2013  
6 NOV 2011

73-252



Նույն բարեկամական

Дозволено цензурою. тифлисъ, 12 марта 1902 года.

Նիկողայոս Աղքանդրեան

Ա Հ Ի Ւ Ա Ն Ե Ա Ն Ց Ի Ն



## ԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ



Եցն է գերութեան մէջ սա-  
ռապողի մխիթարը՝ Հայ-  
րենիք վերադարձի երգը։  
Ի՞նչն է ծերութեան եւ այլ  
պատահարների ժամանակ  
մարդուս ոյժ տուողը եւ նրա  
ընկերը՝ յուսագրական երգը։  
Ի՞նչն է իւր սիրելեաց մահուան պա-  
նառաւ սրտերի աղէխարց մորմոնը զովաց-  
նողը՝ պազայ կենաց երգը։ Ի՞նչն է պա-  
տերազմների դաշտում հազար ու բիւր մար-  
դոց ուրախ ու զուարք յառաջ մղողը կրակի  
ու բոցի մէջ՝ Տէրութեան փառաց եւ պա-  
տույ երգը։ Ի՞նչն է հասարակաց սեղանի  
վայելչացնողը ու համեմողը՝ ուրախական  
երգը։ Ի՞նչն է ամենի տան եւ դուրսը վաս-  
ակաւորի հանգուցիչ թագն ու պսակը՝  
ըս պատահի երգը։ Ի՞նչն է Աստուծոյ տան  
աղօթաւորաց սրտերի ու մսերի վերաբռու-

ցիկ շարժը՝ հոգեպարար երգը՝ ի՞նչն է վերջապէս ընդհանուր մարդկութեան սէրը միւս վառ եւ բորբոք պահողն առ Սատուած՝ ոզեզմայլ երգը։

Ահա՛ սոյն այս երգերի բարերար զրգիոր շարժեց ինձ, որ ամեն տեսակ ամենազործածական ընտիր երգերից կազմեցի սոյն փոքրիկ «Ծոցի երգարանը», միայն այնախոհ դիրք տալով սորան, որ յարմար լինի սրտին մօսը եւ ծոցին մօս պահել. այս պատճառաւ եւ անուանեցի «Ծոցապահիկ» կամ «Ծոցի երգարան»։

Որովհետեւ Ծոցի երգարանի բոլոր օրինակները վերջացել են եւ տաս ցանկացողներ եւս կան, այդ պատճառով նոյնը բարեփոխուած ՚ի լոյս ընծայեց երկրորդ տպագրութեամբ, ընտիր թղթի վերայ, գեղեցիկ տպագրութեամբ իմ հարազատ եղբայր Զարմայր Տէր-Դաւթեանցը, որին եւ մատուցանում եմ իմ խորին շնորհակալութիւնը։

Երգերը դասաւորուած լինելով այբուբենական կարգով՝ ցանկ դնելը աւելորդ համարեցին։

Կամաց Տէր-Դաւթեանց

## ԽԱՌՆ ԵՐԳԵՐ


ՀԱՅՈՒ ԵՐԳԻ.



Հա ծագեց կարմիր արև,  
Տաք և պայծառ է օրը,  
Դէ, բաշեցէք, սիրուն եզներ,  
Յառաջ տարէք արօրը:  
Վարը վարենք, ակօս փորենք,  
Խոր ակօսներ հողի մէջ.  
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,  
Յորեան դիզենք կալի մէջ:  
Կը գայ ձմեռ—մենք վախ չունենք—  
Ուրախ կ'անցնի մեր օրը,  
Ուտելու միշտ պաշար ունենք,  
Լի և կուշտ է մեր փորը:  
Դէ, բաշեցէք, սիրուն եզներ,  
Շուտով վարենք արտերը,  
Թոնդ չասեն մեր դրացիքը՝  
Ծոյլ են չասօի եզները։

Բաժգի





Անի քաղաք նստեր՝ կուլայ,  
Չը կայ ըսող՝ մի լա, մի լա:  
Կըսես քիչ է. թաղ մնայ՝ լայ.  
Ա՛խ, բրբ լսեմ՝ մի լա մի լա:  
Շատ ցաւերով կ'այրիմ՝ տապիմ,  
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ,  
Որ խղճալոյս գայ՝ մօտենայ,  
Հէջ չէ ըսէ՝ մի լա, մի լա:  
Ա՛խ, Հայ տղայ, խղճա ինձի,  
Տես թէ քո Անին ինչպէս է,  
Հերիք ես լամ, դու չ'գթաս.  
Չէ քո Անին ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցաւ,  
Լալէն աչքերս կուրացաւ,  
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,  
Բախտու բնաւ զիս մօռացաւ:  
Կողուսեր եմ թագաւորներ,  
Փողովեր եմ գլխուս քոռ բուեր,  
Որբ միշտ կ'երգեն՝ «Անին անցաւ,

Անին անտէր աւերեցաւ»:  
Եկար, տեսար, դարձեր՝ կերթաս.  
Լալով կ'սես՝ «բարեաւ մնաս»,  
Աստուած սիրես՝ չ'մոռանաս,  
Մասիս սարին երբ մօտենաս,  
Ըսես իմ քաջ Արարատին.  
«Նսեր՝ կու լայ քո խեղճ Անին».  
Կըսէ, երբ աւետիր կ'տաս,  
Թէ «իմ Անի՝ հերիմ է լաս»:

Աղեքանդր Ա. Արարատեան



Ասում ես զիմացիր՝ ոնց դիմանամ—միթէ ես եմքար՝  
Դարդիս արա մէկ ճար,  
Կեանքս մաշել ես բոլորովին՝ ամենն իսպաս՝  
Ես ցաւն է դժուար:  
Եսքան նեղութիւն ինձի մի տար անողորմաքար,  
Ովկ գու իմ սիրահարք  
Ե՞կ, սէր իմ ազնիւ, աղաչում եմ, խղճա խղճալոյս՝  
Տնւր բաւականին յոյս:  
Ողորմութիւն արա աղքատիս՝ քաշի մօտգ տար՝  
Տանջիլ մի չարաչար, (շատ՝  
Վախտ որոտումնես, վախտ ամպումնես, վախտ մթնումնես  
Անձրեսումնես կաթ կաթ:

Խոցուած սրտիս նշան է զրել՝ ունբիդ անեղը՝  
Դու իմ ճար ու գեղը։  
Ուրիշների հետ ման զալը՝ քեզ աղաթ ես արել՝  
Ինձի եադ ես արել։  
Ես իմ բախտիցն եմ գանգատաւոր միշտ և մուղարար՝  
Ինձ չէ աալիս դադար։  
Յաւըդ ինձ ես տալիս, ուրիշներին քաղցր խօսքերդ՝  
Ինձ չո ա քո խէրդ։  
Ինձանից աւելի, տաք աեմնեմ, էլ ով ա տէրդ՝  
Ինձի նա տայ քո սէրդ։  
Դու քո դարդերդ լաւ գիտես՝ խեղճ Աղամ Աղամ՝  
Խալիբն ինչ ա խարար։

## Թպրար Աղամ



Աղնիւ ընկեր, մեռանում եմ,  
Բայց հանդիստ եմ ես հոգւով.  
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,  
Օրհնում եմ քեզ Աստուծով։  
Հեռանում եմ, անդին ընկեր,  
Չգնահատած ոչ որից,  
Բայց հաւաստեաւ անձնանըւել  
Աղգիս մշակ կ'հաշուխ։

Աղնիւ ընկեր, չը մոռանաս.  
Անդաւաճան, ջերմ սիրով  
Ես սիրել եմ իմ հայրենիք, —  
Գնա և գու նոյն շաւզով։  
Խեղճութիւնը հայոց աղգի  
Կարեկցաբար մտածիր.  
Ոսկէ գրքոյկն եղիշէի  
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։  
Այնտեղ սուրբ կրօն, աղգ միաբան  
Աղատ կամբով ու խիղճով.  
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,  
Իւր ինկելի քաջերով։  
Հայրենիք, — սեղան սրբութեան —  
Ես Աստուծոյ առաջե  
Շատ կ'աղաշեմ, շատ կ'արտասուեմ,  
Որ ծագէ քեզ նոր արե։  
Իմ մտերիմ, մահըս մօտ է,  
Բայց հանգիստ եմ ես հոգւով.  
Որովհետեւ խիղճս արդար է,  
Ճշմարտութեան շատագով։

## Ս. Յ Շահագիզեան





## ՕՐՈՐԱՑԻ ԵՐԳ

Արի, իմ սոխակ, թնդ պարտէզ, մէրին,  
Տաղերով քնւն բեր տըզիս աշերին.  
Բայց նա լալիս է, գու, սոխակ, մի դալ,  
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:  
Եկ, արեղաձագ, թնդ արտ ու արօտ,  
Օրօրէ տըզիս, քընի է կարօտ.  
Բայց նա լալիս է, գու, ձագնւի, մի դալ,  
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:  
Թնդ գու, տահարակիկ, քու ձագն ու բունը,  
Վույխույով տըզիս բեր անուշ բունը.

Բայց նա լալիս է, տահարակիկ, մի դալ,  
Իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ:

Կաշաղակ՝ ճարպիկ, գող արծաթասէր,  
Շահի զրուցով որդուս բունը բեր.  
Բայց նա լալիս է, կաշաղակ, մի դալ,  
Իմ որդին չուզէ սովորաքար դառնալ:

Թնդ որսըդ, արի, բաջասիրտ բազէ,  
Քնւ երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...  
Բազէն որ եկաւ՝ որդիս լըռեցաւ,  
Ռազմի երգերի ձայնով ըընեցաւ:

Գամառու-Քարիստ



## Ա.ՌԱԽՈՏԵԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ


Այ մարդ՝ այսօր շատ ըընեցար, նընջեցիր,  
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.  
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,  
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փըռուեցաւ:  
Ընկերներդ վաղ արտերը գնացին,  
Ցորեն, գարին գերանդիով հընձեցին,  
Խուրձ կապեցին, բարդ-բարդ-եցին դաշտումը,  
Նստան հանգչիլ կաղնիներու հովումը:  
Այ մարդ՝ վերակաց սառը ջրով լուացվիր,  
Գոտիդ կաղէ, գերանդիդ մոռ դաշտ հասիր,

Քանի հով է՝ հունձըդ արա արտումըդ,  
Հունձըդ հընձէ, մի ծուլանար գործումըդ:  
Հունձըդ կապէ-բարդըդ բարդէ, տունարի,  
Հանդստացիր, երբ քո հունձըդ կատարի,  
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,  
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը:

Այ մարդ՝ հերիք ինչ որ այսօր քընեցար,  
Աչըըդ մէկ բաց, տես թէ մըշափ ուշացար.  
Մեր գրացին վաղ անցկացաւ կամուրջէն,  
Վաղ լըռել է մեր գըզիրը ձայնելէն:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրական.  
Սրեգական շողը հասաւ մեր գըրան.  
Մի ծուլանար, ժամանակդ խնայէ,  
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ:

Ո. Տ.-Դ. Պատկանեան



### Ո Ւ Ա Ա Ն Ո Ղ

(Թարգմանութիւն Գերմաներէնից)

Այն ի՞նչ ազդ է, այն ի՞նչ ցեղ է,  
Որ միշտ անկախ է,  
Որոյ տունը ամեն տեղ է,  
և անփող ուրախ է..  
Ուսանողն է այն զուարթ մարդը,  
Կենաց քէֆն է նորա ցանկացած բանը:  
Այն ազ է արև ծագելիս՝  
Ինքն էլ զարթնում է,  
Ու քաղցը ձայնով երգելիս՝  
Փողոցները չափում է: Ուսանողն է, և այն:

Ո՞վ երբէք սէրից չի վախում  
Ու միշտ հարս ունի,  
Եւ իր անճոխ, անպերճ կեանքում  
Դարդ ու հոգս չունի: Ուսանողն է և այն:

Ո՞վ է միշտ առաջին կըռվում  
Հայրենեաց համար,  
Փայլուն գինին շիշով կոնծում  
Ուրախ, բայց արդար: Ուսանողն է և այն:  
Եղբարը՝ դուք որ այն ազդիցն էք,  
Գինին պատուեցէք.

Ուսանողական պատիւր

Հաստատ պահեցէք:

Իրաւ մենք ենք այն դուարի՛ ազգը  
Կենաց քէֆն է ամենուս ցանկացածը:

Ք. Տ.-Պ. Պատկանեան



Առաւօտեան բազըր և անոյշ հովերըն  
Մերձեալ հընչեն մեզմով թըլփոցգ քովերն.  
Արդ ծածանին աչացս լցեալ ծովերըն.

Բացիր, բացիր, իմ կարմիր վարդ աննըման,  
Գեղըդ նման արեգական վառվառման:  
Քանի ողբամ նոր ՚ի նորոյ խոցոտիմ,  
Հղփայլուն գեղդ ՚ի միտ բերեալ բոցոտիմ,  
Ցորդ արտասուօք՝ ցայդ և ցերեկ թացոտիմ.  
Բացիր, և այլն:

Չմենն էանց՝ ես քեզ կարօտ մնացի,  
Այրիմ, տապիմ որպէս ՚ի հուր հընացի,  
Քեզ շատ օքեր՝ ես ՚ի ձեռաց դընացի:  
Բացիր, և այլն:

Տեսեալ զծաղկունս՝ զամէնն ինձ փուշ  
Վարկանեմ,

Թեօք բախեալ՝ զսիրտ իմ քնքոյշ հարկանեմ  
Բացաւ սըրտիս՝ ահա քեզ յուշ արկանեմ:  
Բացիր, և այլն:

Արքայարանն իիւզանդիոյ մեծ շինի,

Տեղ և բընակ յարմարեալ քեզ յարկ շինի,  
Նաւակատեօք՝ յիշատակ քոյ յար տօնի:

Բացիր, և այլն:

Պետրոս վարդ. Վափանցի

100  
100  
100  
100



ԵՐԳ ԱՂՋԹԱԿԱՆ Ի ԴԵՄՍ ՍՐԲՈՅ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ, ԵՒ ԻՒՐԱՔԱՆՁԻՒՐՈՅ ԴԻՄԻ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՍՆՁՆԱԿԻ

Առաւօտ լւոսոյ, արեգակն արդար, առ  
իս լոյս ծագեամ:  
Բղիսումն ՚ի հօրէ, բղիսեա ՚ի հոգւոյս, բան  
քեզ ՚ի հաճոյս:

Դանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ,  
Դուռն ողորմութեան, գաւանողիս բաց, գա-  
սեցո վերնոցն:  
Երբեակ միութիւն, եզելոց խնամնղ, և ինձ  
ողորմեաւ:  
Զարթիր Տէր յօդնել, զարթն ըզթմրեալս,  
զուարթնոց նմանել:  
Էդ հայր անըսկիզբն, էակից որդի, է միշտ  
սուրբ հոգի,  
Ընկալ զիս դթած, ընկալ ողորմած, ընկալ  
մարդասէր:  
Թագաւոր փառաց, թողութեանց տըւող,  
Թող ինձ զյանցանս:  
Ժողովող բարեաց, ժողովեան և զիս, ժողովս  
անդրանկաց:  
Ի քէն Տէր հայցեմ, 'ի մարդասիրէդ, ինձ  
բըժըշկութիւն:  
Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լու-  
ծանող ցաւոյս:  
Խորհըրդոց դիտող, խաւարիս չնորհեա խոր-  
հուրդ լուսաւոր:  
Ծընունդ հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ,  
ծագեա լոյս փառաց,  
Կանարար փրկիչ, կեցո զմեռեալս, կանդնեա  
ըզգլորեալս:

Հաստեա հաւատով, հաստատեա յուսով,  
հիմնեցո սիրով:  
Զայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ; ձիր  
բարեաց չնորհեա:  
Ղամբարամի լուսոյ, զեկավար ճարտար, զո-  
ղեալս ամրացո:  
Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց,  
ճեպել 'ի յերկինս:  
Միածինըդ հօր, մոյծ զիս յառագաստ, մա-  
քուր հարսանեացո:  
Յորժամ գաս փառօք, յահագին աւուրն,  
յիշեա զիս Քրիստոս:  
Նորոգող հնութեանց, նորոգեան և զիս, նո-  
րոգ զարդարեա:  
Շնորհատու բարեաց, շնորհեա զբաւութիւն,  
շնորհեա զթողութիւն:  
Ուրախացո Տէր, ոգւոյս փրկութեամբ, ոյր  
վասն եմ 'ի սուդ:  
Զար մշակողին, չար սերմանց նորին, չորացո  
զպըտուղն:  
Պարգևիչ բարեաց, պարգևեա իմոց, պար-  
տեացս թողութիւն:  
Զուր շնորհեա աչացս, յերմ հեղուլ զարտօսր,  
յընջել զյանցանս:  
Ուեախնըդ բաղցու, ուամ ոգւոյս արբո, ուահ  
ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս, սիրով քո ճմիեա, սիրա-  
իմ քարեղէն:

Վասըն գըթութեան, վասն ողորմութեան,  
վերըստին կեցո:

Տենչալոյդ տեսլեամբ, տուր ինձ յագենալ,  
Տէր Յիսուս Քրիստոս:

Բարսւնդ երկրաւոր, րոտեա զաշակերաս,  
րամից երկնայնոց:

Յօդ արեան քոյ Տէր, ցողեա ՚ի հոգիս, ցըն-  
ծացէ անձն իմ:

Իւծեալս մեզօք, ւիւծեալ աղաչեմ, ւիւսել  
ինձ բարիս:

Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել, փոր-  
ձութեանց մեզաց:

Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս,  
ըեղ երգել ըզփառո:

Ներսէս Կլայնցի



Ն Կ Ա Ր Ի Զ

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ:  
Պատանի ուր ես մոքով մոլորած.

Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ,  
Վըշեայ կտաւը ըու հանդէպ փըռած:

Շուռ տնւր աչերըդ, նայէ գէս ու գէն,  
Տես, ըեղ ծաղրում է անմիտ ամբոխը,

Զարթիր, սիրելի, այդ անուշ քընէն,  
Գոնէ մի անգամ հանէ՛ քու ոիսը:

Բայց գու ներում ես նոցա վեհ հոգւով,  
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին...

Յանկարծ աչերըդ փայլեց սուրբ շնորհըով,  
Հըսկայի սիրտըդ թընդաց խիստ ուժգին:

Առիր վրձինը, թաց-արիր ներկով,  
Շունչ տուիր անշունչ կոպիտ կըսաւին,

Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով.  
Քեղ անկարելին անյայտ է բնաւին:

Մէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն  
Տուիր պատկերին մատիդ շարժուածքով,  
Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն՝  
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով:

Ապշեց ամբոխը, վազեց, յառաջեց  
Քու կենդանագիր պատկերի գիմաց,  
Ծնկաչոք զմուռոս ու հալուէ խընկեց,  
Գոշեց մեծաձայն՝ «Դա է իմ Աստուած»:

Բայց, միս, քու անքուն ժամերու ճիգը  
Քանի մի արձաթ հաղիւ դին դրին.  
Ստեղծօղլդ գարձար քո խեղճ խըլճիթը,  
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին:

Գամառ-Քարիալա



### Տ Ա Դ Ծ Ն Ե Դ Ե Ա Ն

Այսօր տօն է ծննդեան, աւետիս:  
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս:  
Այսօր արեն արդարութեան, աւետիս:  
Երեեցաւ 'ի մէջ մարդկան, աւետիս:  
Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս:  
Ծնաւ երեր զանմահ արքայն, աւետիս:  
Այսօր հրեշտակը յերկնից իջան, աւետիս:  
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս:  
Այսօր դրժողբըն սարսեցան, աւետիս:  
Գունդըք դիւաց յոյժ տրտմեցան, աւետիս:  
Այսօր չարքն կարկեցան, աւետիս:  
Եւ ագամեանին ուրախացան, աւետիս:  
Աստղ մի պայծառ և պատուական, աւետիս:  
Երեեցաւ 'ի Հընդըստան, աւետիս:

Մեծ թագաւորք ժողովեցան, աւետիս:  
Յոլով գպիրք և շատ իշխաննք, աւետիս:  
Զաստղն տեսին և զարմացան, աւետիս:  
Շատ քննեցին և չիմացան, աւետիս:  
Մովսէս, արի տես ըզՄինա, աւետիս:  
Եւ զմորենին որ անկէզ կայ, աւետիս:  
Ցնծա, ցնծա, Դաւիթ արքայ, աւետիս:  
Հնչեա զբնարն քո և խայտա, աւետիս:  
Զոր ասացեր նախագուշակ, աւետիս:  
Կատարեցաւ յոյժ գերունակ, աւետիս:  
Թէ 'ի Սաբայ և յԱրաբայ, աւետիս:  
Սուրբ պատարագ ըերցեն նըմա, աւետիս:  
Ահա երեք արքայ եկին, աւետիս:  
Որ երեքեանըն անուանին, աւետիս:  
Մելքոն, Գասպար և Բաղդասար, աւետիս:  
Որը 'ի Սաբայ և յԱրաբայ, աւետիս:  
Ոսկի՝ կնդրուկ՝ զըմուռ նմա, աւետիս:  
Ունին երեք ազնիւ ընծայ, աւետիս:  
Ոսկին զպատիւն արքայական, աւետիս:  
Կնդրուկն զզարդ Աստուածութեանն, աւե-  
տիս:  
Զըմուռն որ էր անապական, աւետիս:  
Նըշան թագման և յարութեան, աւետիս:  
Երկոտասան հազար էին, աւետիս:  
Երբուսակմ քաղաք մըտին, աւետիս:

՚ի մէջ աստղին զկոյսըն տեսին, աւետիս.  
 Ունէր ըզմեր Տէր ՚ի գրկին, աւետիս:  
 Երուսաղէմ դըղըրդեցաւ, աւետիս:  
 Երբ զորոտումն լրսեցին, աւետիս:  
 Յորմէ կալեալ Հերովդէին, աւետիս:  
 Միեաց զշար ձեռն ՚ի նոսին, աւետիս:  
 Մինչև խախտեալ սիւն դարպասին, աւետիս:  
 Արար բազում վրնաս նոցին, աւետիս:  
 Ապա սիրով արձակեցան, աւետիս:  
 ՚ի Բէթղէհէմ ելեալ գնացին, աւետիս:  
 Խաղային և խընդային, աւետիս:  
 Զնուագարանսըն հընչէին, աւետիս:  
 Տեսին Յովսէփ և Մարիամ, աւետիս:  
 Յահէ նոցա փախուստ առին, աւետիս:



## Ս Ա Յ Լ Ո Ւ Դ

Ահա սուրհանդակի սայլակը  
 Ուղիղ ճամբով է դուրս-թըռչում,

Եւ Վալդայի տխուր զանդակը  
 Կամարի տակ է դողանջում:  
 Արթուն սայլորդը գիշերուան դէմ  
 Իւր վիճակի վերայ տխրեց,  
 Եւ սիրեկնի աչաց կարօտը  
 Նա տխրագին ձայնով երգեց:  
 «Կապուտ աչեր, կապուտ աչեր,  
 Կըտրկիս կեանքը մաշեցիք,  
 Ինչու, ինչու, դուք չար ոսոխներ,  
 Ինչու սրտերը բաժնեցիք»:  
 «Մընաս բարե, իմ տուն հօրական,  
 Մընաս բարե, իմ սիրական,  
 Ես կը հանդչիմ զինչ բոց կըրակին  
 Այս անբնակ դաշտի միջին»:  
 «Արևիս լոյսը խաւարել է,  
 Այս աշխարհումն էլ որբ եմ ես,  
 Սըրտիս կարօտը աղջկայ տեսնելիու  
 Մինչև ՚ի մահ դրկած եմ ես»:  
 Այս որ ասաց՝ շարժեց մորակը,  
 Երեք ձիանց մէջքին խըփեց,  
 Իւր սիրեկնի պարզ յիշատակը  
 Այսպէս երգով նա փարատեց:



ԵՐԳ ՈՒՐԱԿԱՌԻԹԵԱՆ

Արիք որ երթամք  
Սոխակաց երամք,  
Ծաղիկ բացուեցաւ,  
Միշտ փառօք ցընծամք:  
Արի, գովելի,  
Գովելի լի լի, (Երիցո):  
Ծաղկունքըն գարնան՝  
Սոխակ աննըման,  
Զայնիւ ցընծալով  
Եղնակ բառնան:  
Արի, գովելի, և այլն:  
Զայնիւ երգեսցուք,  
Ոլրով գոչեսցուք,  
Եւ 'ի դէմ վարդին  
Միշտ ոստոստեսցուք:  
Արի, գովելի, և այլն.  
Եւ մեք երգեսցուք,  
Սիրով գոչեսցուք.  
Եւ 'ի ժամ գարնան  
Միշտ փառըս տացուք:  
Արի, գովելի, և այլն:  
Եկայք սիրեսցուք,  
Զմիմեամք փարեսցուք,  
'ի հանդէպ վարդին  
Պարուք բերկրեսցուք:  
Արի, գովելի, և այլն:

Ահա ցընծասցուք,

'ի պարտէզ հասցուք,

Դու միշտ ցանկալի՝

Ե'կ ուրախասցուք:

Արի, գովելի, և այլն:



Մ Ո Ւ Ա Ա

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ  
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ.  
Ուխտեմք 'ի սէր եղբօր՝ զկեանս գնել գրաւ,  
Օ՞ն անդր 'ի մէնջ այլ ընկերին լարել դաւ:

Սլացտւ 'ի մէնջ բաղդն անհամբոյր,  
Արդ նոր բաղդիս բաղցր է համբոյր.  
Եղբայր զեղբայր գոռուէ սիրով,  
Ճոխն աղքատին մատչի գթով:  
Էանց գիշեր՝ արդ առաւօտ,  
Ի ցող ժպտին Մասեաց արօտ.  
Եւ վառ 'ի վառ շողողելով,  
Էոյսն արեգին ծըփայ 'ի ծով:

Հապա մանկունք,

Վեհ բաջազունք.

Ի գլուխ պըսակ,

Ի յաղթանակ:

Առեալ նուագս,

ՅԱրագս արագս.

Օ՞ն փութասցուք,

Օ՞ն երգեսցուք:

Սէր և գութ,

Մէր պըսակ.

Առ մեր բաղդ,

Հրաւիրակ:


Ցնծասցեն,

Որը լըսեն.

Թէ «ուր Հայ,

Զիր անդ վայ»:

Յդիազար ՄԱԼԻՔԻԱՆԻ



Հ Ա Յ Ո Յ Գ Ի Ն Ի

աժակներ առնունք,  
Եղբարք,

Լիք լիք բաժակներ գինով,  
Կարմիր ու ճերմակ զինին  
Մեղ լինի անոյշ համով:  
Բերներիս տանենք

անվախ,

Զէ դա խառնած կամ խարդախ:

Նեկսար է և ոչ գինի.

Խմենք՝ մեզ անոյշ լինի,

Արաքսայ ջրով ցողած,

Հայոց արեով հասած,

Հայոց աղջիկ է քաղել,

Քընքոյշ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրէն,

Հայաստան տընկած նոյէն,

Անմահ երկնային գինին

Նա խըմեց, երբ իջաւ սարէն:

Այս անոյշ գինին խմողը,

Արտէն թնդ հանէ սիւը.

Ամենքս էլ ասենք ամէն.

Որ մեզի շատ տայ ամ էն:

Ու. Պատկանեան

Հ Ն Կ Ե Ր

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն  
Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն,  
ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ

Ծերեկի նման անցնում է մուժ գիշերը  
մարդուն:

Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ բիշ է  
գարձեալ,

Այնպէսն է հոգեկան լուսատու լավաերը  
մարդուն.

Ընկեր եմ ասում, աստուածավախ, Ճշմարիտ  
ըկներ,

Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը  
մարդուն:

Թշնամիները իւր վերայ գալոծ ժամանակը՝  
կտրիճ, հարազատ ընկերն է սուսերը  
մարդուն,

Ով որ ունենայ մոերիմ ընկեր, Զիւան-աշըդ,  
Զի սպիտակիր ամենեին մէկ հերը մարդուն:



ԵՐԳ ՈՒՍՍՆՈՂԱՑ

Բաւականի է մեղ մտաց զբաղմունքն,  
Խմենք ևս ունինք մեր համոզմունքն,  
Ճաշուցն առաջ մեխած սովորել,  
Իսկ այսուհետեւ բաժակին նուիրել,  
Խմենք, եղբարք, գինի:  
Կեցցես գու չԱստուած գինարթեցութեան,  
Կեցցէ և քո գիւտ այժմ և յաւիտեան,  
Յոգնած մարմինս դու զօրացնում ես,  
Երբ պարապմունքից գագարում եմ ես:

Խմենք, եղբարք, գինի:  
Արդէն նստուած գինէ տաճարում,  
Ուխտաւորները խմիչը են զոհ բերում,  
Կարմիր արիւնը նուիրական թասին,  
Հաճելի է շատ մեր ծեր Բաքսուին:

Խմենք: եղբարք, գինի:  
Հարկաւոր է շուտ ուխտատուն շտապել,  
Տասերկու ժամ ճիշտ կաթիլ չեմ ըմպել,  
Ծոմապահութեանս վարձը թնդ լինի  
Մի շիշ երասխայ վարդագոյն գինի:

Խմենք, եղբարք, գինի:  
Ահա թասերով զանգահարում են,  
Գինի պաշտելու մեղ հրաւիրում են,  
Ով պատարագին փոքր ինչ ուշանայ,  
Մի լիք շիշ գինի պատիժ կ'ստանայ,  
Խմենք, եղբարք, գինի:

Ուրեմն միմիայն ես եմ մնացել,  
Ու ազօթատուն գեռ չեմ դնացել..  
Երթամ համբուրեմ շուտով տակառին,  
Սուրբ և անարատ Բաքեայ պատկերին:  
Խմենք, եղբարք, դինի:

Մ. Փ.



Գիշեր ցերեկ կը հառաշեմ; ախ, օրիորդ քո  
սիրուդ,  
Աև աչերուդ, վարդ այտերուդ զարնուեցայ,  
ինչ օգուտ,  
Աչերուդ, այտերուդ և սոկեթել մազերուդ,  
Միայն քեզի սա կ'աղաչեմ; որ ունենաս քիչ  
մը գութ:  
Գիտես, անդութ, որ սպատանին ի դիմանար այս ցաւուն,  
Քեզի համար ալ չի գագրիր աչքիս արցունքն օրն ՚ի բուն:

Քեզի միայն կ'յիշեմ թէ քուն ըլլամ թէ  
արթուն,  
Թէ մութ ըլլայ, միտքս կու գաս նոյնպէս  
և առաւտօտուն:  
Շատ աղուրներ թէպէտ աեսայ, սիրտս  
միայն քեզ սիրեց:  
Ո՞հ, չեմ դիտեր, թէ քու սէրդ սրտիս մէջ  
ով արծարծեց:  
Ախ, քու խաժուն մարիկդ իրէն փեսայ ով  
ընտրեց,  
Գերի կըլլամ քու մօրկանդ, եթէ զիս գուրս  
չի ձըգեց:  
Ո՞ւր էր, որ սա աղջիկը ինձի ըլլար ամուսին.  
Խիստ երջանիկ պէյերու պէս ապրէինը ՚ի  
միասին,  
Թոմպուլիկ կլորիկ զաւկըներիս մեր չորս դին,  
Ես ծխէի իմ սիկառս, ասղնեգործէր իմ տիկին:  
Քեզի համար թափառական ես սար ու  
ձոր ընկեր եմ,  
Քեզի համար ճըղիկ ճըղիկ ոսկոռ ու մորթ  
եղեր եմ,  
Ալ բաւական իս խոցես, ահա ոտքդ ընկեր եմ,  
Հոէ ինձի բառ մ'երջանիկ, թէ ես ալ բեզ  
կը սիրեմ:



ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել նախշուն թևերով,  
Նախշուն թևերը պէսպէս ձեւերով.  
Գոյն դոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ.  
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով:  
Երկինք ու երկիր քեզ տօնեն, գարուն,  
Զի ես բան զամեն եղանակ սիրուն.  
Նա անձրև ցողէ առատ 'ի վերէն,  
Դա օրչնել աայ քեզ եկոր հաւերուն:  
Ասկի արել փայլէ քեզ վերէն,  
Կենսաբեր հովը փըշէ 'ի լերէն,  
Ախ, աղնիւ գարուն, եղանակ սիրուն,  
Արդեօք դու ինչ բաղդ բերիր ինձ Տէրէն:  
Գլխաբարշ երթամ 'ի պարտէզ այդուն,  
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն.  
Չկայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,  
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անդորր է քուն:  
Մեռած պատանքած գետնին կեանք տուար,  
Տերեթափ ծառին ստուերախիտ արար.  
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,  
Ինձ մենակ խղճիս էսպէս մոռացար:  
Առաջ գնա, գարուն, գեպ'ի հիւսիսն 'ի խոր,  
Գնա, կանանչյուր դու անդ սար ու ձոր,  
Որոց անհամբեր քեզ կան՝ տնւր բարե,  
Բու ուրախ գալստեամբ նոցա զուարձացուր:

Կուգաս գալ տարի՝ դու ինձ կու գտնես  
Ոչ 'ի մեր այգին և ոչ 'ի պարտէզ,  
Այլ անզարթ քընով հողի տակ պառկած,  
Գերեզմանաբար մի վրաս կը տեսնես:  
Ու. Պատկանեան



Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն,  
Եկեալ աստ զամբիւղօք 'ի Հայոց երկրէն,  
Յուսամ, զի Հայ տիկնայը և պարնայը Հնդկաց  
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբիւղաց:

Ա՛ռ զամբիւղ (3) յօտար աղջկանէս:  
ԶԱրարատ, զեփրատ և զՃիգրիս թողի,  
Միայնակ շրջիմ աստ յեղերս Գանգէսի,  
Պանդուխտ եմ, օգնեցէք անտերունչ անձինս,  
Զի ծնողը ձեր յառաջ աստ պանդուխտ էին:

Ա՛ռ զամբիւղ, և այլն:  
Զամբիւղը իմ են յարմար ասզնեգործութեան,  
Պահել անդ զմատնոց, զթել, զասզաման.  
Եմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան,  
Երբ խաշինք և գառինք իմ զինե խայտան:  
Ա՛ռ զամբիւղ, և այլն:  
Գանձ բազումք, ցաւք բազումք կան յայսմ  
աշխալհի

Պէտք սակաւը, ցաւը սակաւը կան յիմում  
երկրի:  
Զայդի մի ունէի՝ զամբիւղ գործէի,  
Լոկ կաթամի և պտղով երջանիկ էի:  
Ա՛ռ զամբիւղ, և այն:  
Աստ սերկեիլ, ծիրան և խաղող չի կայ,  
Բայց միայն աղա, բիլայ և բիլա.  
Ախ, երբ իցէ, զի արժանի եղեց վերըստին  
Ճաշակել զպտուզս իմոյ պարտիզին:  
Ա՛ռ զամբիւղ, և այն:  
Ապա, դուք լաւ տիկնայք՝ զամբիւզս իմառէք,  
Գիւղական աղջկանս սիրով օգնեցէք.  
Զի դարձեալ յերկիր իմհանդերձ ձեր շնորհօք՝  
Ձերախտիս ձեր առեալ՝ գովկեցից բազմօք:  
Ա՛ռ զամբիւղ (3) յօտար աղջկանէս:



### ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿ

Դու տեսել ես երկրն-  
բումը  
Պայծառ լուսին ծագե-  
լիս.  
Կամ թէ կանաչ տերեկի  
մէջ  
Կարմիր ծիրան փայլե-  
լիս:

Դու տեսել ես ծաղկոցումը  
կարմիր վարդը փըթըթած,  
Ծուշան, մեխակ ու նունուֆար  
Զորս բոլորքը պար բըռնած:  
Բայց լուսինը խիստ խաւար է  
Հայ աղջկայ առաջին:  
Ծիրան, մեխակ, վարդ, նունուֆար,  
Զարժեն նորա մէկ պաշին:  
Երկու թըշին վարդ են նըստել,  
Ճերմակ ճակտին՝ մի շուշան,  
Ժպիտը բերնից ցած չի գալի,  
Անմեղութեան է նշան:  
Տես՝ նա առաւ կարմըրելով,  
Իր ընկերից գահիրան,  
Դրըմբդըմբեցրուց փափուկ մատով,  
Ու սկսեց լեզգինկան:  
Նազուկ մէջքը ծառի նման  
Տատանում է գեղեցիկ,  
Մէկ թռչում է նա անգուման,  
Մէկ գնում է խիստ հեղիկ:  
Հալվում է խեղճ կտրիճների  
Ծիրտը՝ նորա տեսնելով.  
Ծերը իրան անիծում է,  
Որ ծերացաւ խիստ շուտով:



Շ Ա Ր Ք Ի

- 1) Դեռ գիշերէ, առաւօտ չէ,  
Հանդիստ քնիր, իմ զաւակ,  
Ահա ծիծս առ բերանըդ,  
Եթէ ունիս դուն փափադ։  
Թէև դրսից քո ականջին  
Դիպչում է սուր աղաղակ,  
Քնիր, քնիր, սիրուն մանկիկ,  
Փամանակ չէ զարթելու,  
Մի հաւատար, որ խաբում են,  
Ոչինչ չունեն քեզ տալու։
- 2) Դու քոյրերիդ մի մտիկ տար,  
Նրանք մեծ են, գառնուկս,  
Օրօր ասեմ, դեռ դու քնիր,  
Որ մեծանաս, գառնուկս,  
Ահա գրի գլխիդ տակը,  
Բարձի տեղակ բաղուկս.  
Հանդիստ քնիր սիրուն մանկիկ,  
Փամանակ չէ զարթելու,  
Մի հաւատար, որ խաբում են,  
Ոչինչ չունեն քեզ տալու։
- 3) Դրացու չար երեխայքը  
Քեզ գոչում են —դժւրս արի,  
Բայց չեմ թողալ, որ դու գնաս՝  
Հանդիպես պատահարի,

- Ոչ ստք ունիս և ոչ լեզու,  
Պարկի, տեղդ—գաղարի,  
Անհոգ քնիր, սիրուն մանկիկ,  
Փամանակ չէ զարթելու,  
Մի հաւատար, որ խաբում են,  
Ոչինչ չունեն քեզ տալու։
- 4) Օրօցքիդ մէջ քեզ պինդ կապեմ,  
Զինի թէ գլորիս,  
Կամ թէ ընկնիս գետնի վերայ,  
Քեզ վասես, մոլորիս.  
Մաիր Մորփէսսի գիրկը,  
Մինչև լեզու սովորիս.  
Այժմ չուտ է, սիրուն մանկիկ,  
Փամանակ չէ զարթելու։  
Մի հաւատար, որ խաբում են,  
Ոչինչ չունին քեզ տալու։
- 5) Բացի կաթը, գու չես կարող  
Զոկ բան ուտել, քաջ տղայ,  
Բերանումդ ատամ չըկայ,  
Երեխայ ես, երեխայ,  
Ինքս կասեմ քեզի զարթիր,  
Երբ բարով ատենը գայ.  
Դեռ հիմայ լոյսը չէ բացուել,  
Փամանակ չէ զարթելու,  
Մի հաւատար, որ խաբում են,  
Ոչինչ չունին քեզ տալու...

ԴՈՒԻ ԶՈՅՎ ԽՆԴՐԵՍ...

Դու զնվ խնդրես մայր իմ անուշ,  
Եկ, մի գողար, մօտեցիր հոս,  
Անլաց աչօք դիտէ զորդիդ,  
Ու իւր վէրգերն արիւնահոս:

Թուրբաց մայրեր թող լան ու դուն՝  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:  
Կնչպէս երբեմն օրրանիս մէջ,  
Կակուխ ձեռքով փայփայելով,  
Մանկիկ մարմնոյս հանդիստ տայիր,  
Իբրև հրեշտակ նուագելով:

Զիս հանգչեցուր ի հող, ու դուն՝  
Ուրախ լուրեր...  
«Նորեկ որդւոյս կենացն արև  
Զեղի համար փայլի հայեր»,  
Այսպէս յայնժամ գու կերգեիր,  
Օրօրոցիս նստեալ ըսկեր:

Անոնց համար չիջաւ, ու դուն՝  
Ուրախ լուրեր...  
Վերջին համբոյր՝ մտամ քեզ մայրիկ,  
Հաստուցանես զայն սիրելոյս,  
Վերջին անգամ գրկեմ մեր հող  
Ոյր արդ կիջնիմ ի ծոցն անլոյս.  
Խաչ մը տնկէ վրաս, ու դուն՝  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:



Երբ հողագործը չունի եղ, արօր,  
Երբէք չեմ ասիլ նորան բաղդաւոր:

Երբ ապրանք ու փող չունի խանութպան,  
Նա էլ է անբաղդ, թշուառ բաւական:

Բայց երբ չերթայ հայ տըղան վարժատուն,  
Այս է ամենից մեծ անբաղդութիւն:



Կ Ե Ն Ա Ց Բ Ա Ժ Ա Կ

(Գերմաներէնից)

Պբարը՝ մի շուրջ ժողովեցէք,  
Քաջ Հայոց կերպի կոնծեցէք.  
Բաժակները դարդեկեցէք } կրկնէ:  
Մեր հայ ազգի կենացը\*  
Հայ երիտասարդներուն,  
Հայրենիք պաշտպանողներուն,  
Որոց անկումնէլ սուրբ է մեզ—  
Այս բաժակը նըւիրենք:

Հայ աղջիկներու կենացը,  
 Որք միայն Հայ մարդ կու սիրեն,  
 Միշտ իրանց մաքուր կու պահեն,  
 Այս բաժակը դարդը կենք:  
 Արանց, որ մեր սիրտն գրաւում են,  
 Մեզ զգօն ճամբով վարում են,  
 Որոց կեանքը մեզ օրինակ,  
 Մի երրեակ «կեցցէ» ասենք:  
 Եղբարց, որք այժմ աւարտել են,  
 Մեր ուխտի անդամ եղել են,  
 Որոց ուխտը միշտ սիրում է,—  
 Այս բաժակը նըւիրենք:  
 Եղբարց, որք դարդից ազատ են,  
 Մահուան հանգիստ վայելում են,  
 «Ողորմի հոգուն» ասելով՝  
 Այս բաժակը նըւիրենք:  
 Բայց որ գեռ գինին փայլում է  
 Ու մեզ իրան մօտ քաշում է,  
 Բաժակներդ դարդը կեցէք  
 Ազատութեան կենացը:

Բ. Տ.Պ. Պատկանեան



b r u 2

Ես լսեցի մի անոյշ ձայն,—  
 Իմ ծերացած մօր մօտ էր.  
 Փայլեց նշոյլ ուրախութեան,  
 Բայց ափսոնս, որ երազ էր:  
 Կարկաչահոս աղբիւր այն տեղ,  
 Թաւալում էր մարդարիտ.—  
 Նա յստակ էր որպէս բիւրեղ,  
 Այն երազ էր ցնորամիտ:  
 Եւ մեղեդին տիսուր, մայրենի  
 Յիշեց մանկութեան օրեր.—  
 Մօրս համբոյրն ես զգացի,—  
 Այս, ափսոնս, որ երազ էր:  
 Կուրծքին սեղմեց կարօտագին,  
 Աչքերս սրբեց—շատ թաց էր,—  
 Բայց արտասուք գնում էին,  
 Այս, այդ լնչու երազ էր:

Ա. Շահազիզեան





Երկու ձեռին երկու մոմ՝  
 Ինձ ընդ առաջ ել 'ի տուն,  
 Մի հարցանէք—ով էր նա,  
 Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ։  
 Ամօթն ըգնա վարդ արար,  
 Ես հիացեալ դարձայ քար,  
 Այն ինչ օր էր և ինչ ժամ;  
 Յորում տեսի ես կեանք նոր։  
 Լիաճըրագ յայնմիկ տան,  
 Ի մարդաշատ բազմութեան,  
 Ի մէջ աղջկանց և հարսանց  
 Յոտին կայր ոմն անդ յանկեան։  
 Այն օրիորդն էր պարկեշտ  
 Ինձ պատահեալ առ դրամի տան,  
 Զոդիս դրաւեաց յիւր 'ի սէր,  
 Ի նմա տեսի ես կեանք նոր։  
 Մարդարտափայլ մարմինն էր,  
 Հասակն էր յոյժ վայելուչ.  
 Զոտիւքն վարսք քարշ դային,  
 Ի գոյն քըրքմոյ վայլէին։  
 Դիմաց շըքեղ երևոյթ,  
 Յօնից, աշաց, այտից դեղ.  
 Շըքթանց, լեզուին համանոյշ

Խոստանային ինձ կեանք նոր։  
 Ս' իս ասացի, թըմրեցայ,  
 Սիրտս սկսաւ դողդողալ.  
 Զաշխարհ համայն մոռացայ  
 Ի գեղ կուսին ապշեցեալ։  
 Թամք կոչելոցն յայն հանդէս  
 Ընդ իմ մեծ բաղդ մախային,  
 Զի մերձաւորք այն կուսին  
 Փեսայ զանձն իմ ձայնէին։  
 Եթէ զաշխարհ լի գանձիւք  
 Ինձ ոք բաշխէր 'ի պարգև,  
 Ո՛չ տեսանէր այնքան բախ,  
 Որքան ՚ի գալս առ կուսին։  
 Արդեօք՝ գուցէ յաշխարհի  
 Սիրոյ նման ինչ հըզօր,  
 Սէր 'ի ձեռաց Արարջին  
 Մեղ մահացուացս է ձիր նոր։  
 Նանրախորհուրդ ազգ մարդկան՝  
 Շատ մի սիրեր գու զաշխարհ,  
 Նա թշնամի է անդութ,  
 Զար բան զբարբ մահաթոյն։  
 Ցանցիւ սիրոյ զըեղ կարթէ,  
 Ի հաղբ անել ըմբըռնէ.  
 Ապա զսիրոյդ առարկայ  
 Ի քէն արագ կողոպտէ։  
 Յարուրիւն վ. Ալամդարեան

ԿԱՐԴԱԼ—ԳՐԵԼ

Երբ որ լեզուս բացուեցաւ,  
Աղատ խօսել սորվեցայ,  
Բարի մօրս ձեռքի տակ  
Գիր կարդալը սկսայ:  
  
Զանցաւ երկար ժամանակ,  
Կարողացայ ճանաչել  
Մի բանի տպած տառեր,  
Նորանցով կարդալ—գրել:  
  
Ետ ժամանակ չանցկացած  
Խնձ համար գիր կարդալը  
Այնպէս դժուար չէ թւում,  
Խնչպէս կասեն ծոյլերը:  
  
Այնուհետև ինձ համար  
Հոլ, վեգի, գնդակի չափ  
Սիրելի էր թուղթ, գրիչ,  
Գիրք, բանոն, մատիտ, տետրակ:



Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Երբոր բացուին դռներն յուսոյ,  
Եւ մեր յերկինս փախ տայ ձմեռ.  
Չքնաղ երկինս մերս Արմենիոյ,  
Երբ փայլէ իւր բաղցրիկ օգերու  
Երբոր ծիծառն 'ի բոյն դառնայ,  
Երբոր ծառերն հագնին տերե,  
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,  
Աշխարհ որ ինձ ետուր արե:  
  
Տեսի գաշտերն ննուրիոյ,  
Լեռն Լիբանան և իւր մայրեր.  
Տեսի զերկինս իտալիոյ,  
Վենետիկ և իւր Կոնտոլներ,  
Կզզի նման չիք մեր Կիպրեայ,  
Եւ ոչ մէկ վայր է արդարե.  
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,  
Աշխարհ որ ինձ ետուր արե:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,  
Ուր ամենայն իդ կ'աւարտի.  
Հասակ մը ուր հէդին 'ի տենչ,  
Յիշատակաց իւր կարօտի:  
Յորժամքնարս իմ ցրտանայ,  
Սիրոյն տալով վերջին բարես.  
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,  
Աշխարհ որ ինձ ետուր արե:

Զ Ի Ն Ո Ւ Ր Ի Ե Ր Գ

(Թարգմանութիւն)

Զինուորիս երգերը եղբարք լսեցէք,  
Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէք:  
Մէկն ունի մեծ տներ, միւսն դիւղ ունի;  
Միայն խեղճ զինուորը ոչինչ բան չունի:  
Նորերը թանկադին, փորը միշտ քաղցած,  
Տուր ձիուն միշտ դարի, ինքդ կեր չոր հաց:  
Թէ բաջպատերազմես, կ'առն մեծ պարգև,  
Թէ ոտքդ կորցնես, կասեն մնաս բարեւ:

Ուր գնամ ես մենակ աշխարքիս վրան,  
Ահա քեզ լաւ վաստակ քսան մէկ տարուան:

Գ. Թարգմանց



Շ Ո Ւ Ճ Ա Ն Ի Կ

Եր հեռանաս քո մայրենի աշխարհից,  
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեղանից.  
Մեր ամենիս դու մայր էիր դժառատ,  
Արդ հեռանաս, մեղ մութ պատէ անփարատ:  
Քո սուրբ ձեռօր մեր վէրքերը շատ անդամ,  
Լուանայիր, դեղ գնէիր ամէն ժամ:

Քո մազերից ոլորէիր վիրակապ,  
Քո բոլոր կեանքդ ազդիդ համար էր ադապ:  
Արդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,  
Վրաց ազդը քո խնամօք պերճանայ,  
Հայաստանը զրկի իւր սուրբ նուշանից,  
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,  
Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս մաքրուհի.  
Գրնաս բարեաւ մեր լոյս հաւատն քեզ լներ,  
Այն ու խաչը քեզ պահապան զօր դիշեր:

Յ. Կարինեանց



Ա. Ի Բ Ո Ղ Ի Կ Տ Ա Կ Ը

(Փոխազրութիւն)

Էնկերը, մաշուելով պօտագրայից,  
Շուտ կը հեռանամ ես ձեղանից,  
Կարճ միջոցում լինելով մեռած,  
Զէք տեսնիլ ինձ այսպէս արբած: (կրկնէ  
— 2 անգ.)  
Այն զինետան մէջ ինձ թաղեցէք,  
Ուր ամենից շատ արբում էի,

Այստեղ գերեզման պատրաստեցէք,  
Ուր տակառի տակ ես պարկէի:

Ոտներս գեպի պատն արէք,  
Իսկ գլուխս գեպի ծորակը,  
Որ երկու ձեռքով բռնէի ես,  
Հացօղիով լիք մեծ բաժակը:

Ինձ հին տկի մէջ պատանի տեղ,  
Լաւ փաթաթեցէք, կուպր բսեցէք  
Եւ որպէս մեղքիս թողութեան դեղ,  
Կէս թունկի գինի բերանս ածէք:

Անձէս թաղեցէք, չ'ածէք զանգակ,  
Ի սէր Աստուծոյ, թաղմանս ժամանակ,  
Բաժակ զարկէք դորա փոխանակ,  
Գինով թրջեցէք արբողիս գիակ:

Դամբանական դուք չ'դրէք բառ,  
Որբան ապրելուս, վարքիս համար,  
Միայն ասել հինգ բառ մեծատառ.  
«Սա էր արբեցող սաստիկ թշուառ»:

Բայց դեռ քանի որ չեմ մեռել,  
Բերէք խմեմ կէս թունկի գինի,

Հոգեհանս գինու ռումբի կարծելով՝  
Գուցէ ձեռք չ'տայ, երբ արբած տեսնի:

Աամսար Տէր-Փաւրեանց



### ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ,  
Թէ երդ թռչին սիրողաբար,  
Մատունք կուսին ամենագեղ,  
Թէ որ զարնեն փափուկ բընար:  
Զունին ձայն այնքան մի սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:  
Տներ ինձ ըսւ ձեռքդ, եղբայր եմք մեր,  
Որ մըլրկաւ էինք զատուած.  
Բաղդին ամեն ոխ չարանենգ,  
Ի մի համբոյր ցրուին 'ի բաց:  
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:  
Երբ ալեոր Մայր Հայսատան,  
Տեսնէ զորդիս իւր քովէ քով.

Սրտին խորունկ վէրքըն դաժան,  
 Քաղցր արտասուաց բուժին ցօղով:  
 Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
 Քան զանձկալի եղբայր անուն:  
 Մէկ տեղ լայինք մենք 'ի հընում,  
 Եկէք դարձեալ յար անբաժան,  
 Խառնենք զարտօսր և ըզինդում;  
 Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:  
 Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
 Քան զանձկալի եղբայր անուն:  
 Մէկ տեղ յոգնինք, մէկ տեղ ցանենք,  
 Մէկ տեղ թափին մեր քրտինքներ,  
 Հզհունձ բարեաց յերկինս հանենք,  
 Որ կեանք աւնուն Հայոց դաշտեր:  
 Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
 Քան զանձկալի եղբայր անուն:

Մ. Գլուխիքաւեան



Ի ննջմանէդ արքայական, զարթիր, նազելի  
 իմ, զարթիր,  
 Եհաս նշոյն արեգական, զարթիր, նազելի  
 իմ, զարթիր:  
 Պատկեր սիրուն տիպ բոլորակ.  
 Լրացելոյ լուսնոյն քատակ,  
 Ո՛չ գտանի քեզ օրինակ, զարթիր, և այլն:  
 Այդ քո տեսիլդ զոր դու ունիս,  
 Արար ծառայ քեղ զգերիս,  
 Արևակէզ գուցէ լինիս, զարթիր, և այլն:  
 Ղաբին սրտիւ քանի կոծամ,  
 Ե՛ վարդ կարմիր և անթառամ,  
 Տես թէ զիարդ խղճալի կամ, զարթիր, և այլն:  
 Տապ և խորչակ ժամանեցին,  
 Զթերթք գեղոյդ այրել կամին,  
 Քանզի էանց գիշերն մթին, զարթիր, և այլն:  
 Է աննման իմ գովելիս,  
 'Ի մէջ ականց գեղ քո մատնիս,  
 'Ի ռահեակ սոյն թուականիս, զարթիր, և այլն:





մ սիրելի զաւակունքս  
 Կ'թափառին օտար աշխարհ։  
 Ես ուր դիմեմ, ուր փնդըռեմ;  
 Կ'ծառայեն այլոց խոնարհ։  
 Եկայք, որդեակք իմ,  
 Զեր մօրն այցելութեան։  
 Դարեր անցան, լուր մը՝ չառի,  
 Իմ քաջերս մեռան, կորան,  
 Կուլամ, արիւնս կը սառի,  
 Մէկը չունիմ տայ ինձ դարման։  
 Եկայք, որդեակք և այլն։  
 Արիւնս ցամքած, սիրտս մաշած,  
 Դէմքս է տխուր մինչ յաւիտեան,  
 Եւ կարտոյն իմ որդեկաց  
 Պիտի իջնեմ սև գերեզման։  
 Եկայք, որդեակք և այլն։  
 Եւ դու, հովիւր թափառական,  
 Կ'երգես տխուր 'ի մէջ հովտաց.  
 Ե՛կ արտասուենք թանգ կորստեան  
 Տխուր մահուան մեր որդեկաց։  
 Եկայք, որդեակք և այլն։  
 Իսկ դու, Կոնւնկ իմ Հայրենեաց,  
 Գնա հեռու աշքէս 'ի բաց,

Յետին ողջոյնս տար զաւակացս.  
 Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած։  
 Եկայք, որդեակք իմ,  
 Զեր մօրն այցելութեան։



### Ի Ն Զ Հ Ա Մ Ա Ր Զ Է

Ինձ համար չէ գարնան գալլ,  
 Ինձ համար չէ ծառի ծաղկելլ,  
 Ուրախութեան սրտի գրգիռը,  
 Ոչ մի բերկրանք չեն ինձ համար։  
 Ինձ համար չէ կենաց բաղդը,  
 Ինձ համար չէ երջանկութիւնը,  
 Եւ մրայօն կուսի աչքերը,  
 Նոցա արցունք չեն ինձ համար։  
 Ինձ համար չէ փայլուն լուսնի  
 Անտառ ու սար լուսաւորելլ,  
 Գարնան վարդի երգչի տաղերը,  
 Սոխակ ու վարդ չեն ինձ համար։  
 Ինձ համար չէ բարեկամաց  
 Մէկ տեղ սիրով տօն կատարելլ.

Զատովիկ օրուայ ուրախ ասելը.

«Քրիստոս յարեաւ» չէ՝ ինձ համար:

Ինձ համար չէ՝ ծնողաց լացը,

Ինձ համար չէ՝ աղջկայ տըխրիլը,

Գերեզմանիս վրայ արտասուիլը,

Բարեկամաց՝ չէ՝ ինձ համար:


Բայց ինձ համար կու գայ ժամը,

Կերթամ թշնամեաց պատերազմը,

Եւ մահառիթ սպանիչ գընդակը

Անդ պատրաստած է ինձ համար:

Ք. Պատկանեան



ԵՄԴ ՊԱՆԴՈՒԽԻԾ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,

Դու գարնան սիրուն թռչնակ,

Դէպի ժւր, ինձ ասա,

Թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թըռիր, ծիծեռնակ,

Ծընած տեղս-Աշտարակ,

Անդ շինիր քո բունը

Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեսը

Հայր ունիմ սդաւոր,

Ոի միակ իւր որդուն

Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորա,

Ինձնից շատ բարե արա,

Ասա թնջ նըստի լայ

Իւր անբազդ որդու վերայ:

Դու պատմէ՝ թէ ինչպէս

Աստ անտէր ու խեղճ եմ ես,

Միշտ լալով, ողբալով՝

Կեանքս մաշուել, եղել կէս:

Խնձ համար ցերեկը՝  
Մութ է շրջում արեգը,  
Քիշերը թաց աչքիս  
Քունը մօտ չի գալիս:  
Ասիր, որ չի բացուած՝  
Թառամեցայ միացած,  
Ես ծաղիկ գեղեցիկ՝  
Հայրենի հողից զրկած:  
Դէհ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացիր, թռիր արագ  
Դէպ ՚ի Հայոց երկիրը,  
Ծնած տեղս-Աշտարակ:

ԵՐԳ ՑԱՂԹԱԿԱՆ <sup>1)</sup>

Կեցցէ՛ Շապնւհ, կեցցէ՛ արքայ,  
Փառաց նա միշտ օրեր տեսնայ.  
Կեցցէ՛ օրուան այս յաղթութեամբ  
Եւ երբ արև փայլի անամբ:  
Իւր թշնամիք փախչին հապճեպ  
Իրու լղմէդ լուսոյն հանդէպ.

1) Այս երգը առնուած է Արշակ Բ. ողբերգութիւնից:

Եւ տարածի իւր զօրութիւն  
Յոր վայր վազեն նըշոյեք արփւոյն:  
Քեզի նման, Մազդեզանց քաջ,  
Զեղաւ հզօր ոչ ոք յառաջ,  
Եւ ոչ յետոյ իսկ ոչ երբէք  
Լիցի յԱրփա և ոչ ուրեք:  
Կեցցէ՛ Շապնւհ, կեցցէ՛ արքայ,  
Փառաց նա միշտ օրեր տեսնայ,  
Եւ տիրասէր զօրս իւր՝ ըղՊարս՝  
Իւր հետ տանի փառաց ՚ի փառս:



Կապոյտ երկնքում  
Աստղեր են փայլում,  
Այլև լուսնեակը.  
Ամենից սիրուն,  
Ամենից փայլուն  
է արեգակը:  
Կանաչ դաշտերում  
Եւ այգիներում  
Ծաղիկներ շատ կան.  
Բայց չէ ոչ մինը  
Վարդի նմանը,  
Նա է բնութեան դարդ:

Սիրուն աղջիկներ,  
Խչպէս ծաղիկներ,  
Ամեն տեղ շատ կան.  
Բայց իմ ընտրածը,  
Սրտիս սիրածը  
Հրեշտակի է նման,

Գ. Թարխուղարեան



Կ Ր Ա Մ Բ Ա Մ Բ Ո Ւ Լ Ի

(Թարդ. ռուսերէնից)

Կրամբամբուլին էս էն օղին է,  
Որ մեզի քաջ ծանօթ է;  
Որոյ համը չի տեսնելն  
Ուսանողին ամօթ է.  
Բայց հանապազ, իմ սիրելի,  
Մենք կոնժում ենք կրամբամբուլի:  
Հայրս անդադար ինձ գրում է,  
Որ իշխան շուտ աւարտէ.  
Ժամանակդ արագ անցնում է,  
Յես, գրերդ լաւ սերտէ:  
Բայց նորա պարոն որդին

Կոնծում է կրամբամբուլի,  
Կրամբիմբամբուլի, կրամբամբուլի:  
Թէ դարդն ու հոգոը ինձ նեղում է,  
Թէ իմ քէֆը տեղը չէ,  
Թէ աղջիկը ինձ խաբում է  
Ու հաւատարիմ չէ  
Կ'ասեմ աղջիկ, իմ նազելի,  
Քու տեղ կ'սիրեմ կրամբամբուլի:  
Թէ լերդս ու թօքըս իմ մաշուել է,  
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,  
Թէ որ խմելն ու քէֆ անելլ  
Բըժիշկն ինձ արգելում է,  
Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլի,  
Ես կ'կոնծեմ կրամբամբուլի:

Երբ մայրս ինձ մի հարս ճարել է,  
Ասում է որ՝ պըսակուեմ,  
Եւ պարտքն ու կարդն ինձ ստիպել է,  
Որ ես ճաշ ու քէֆ սարքեմ:  
Ես ճաշի տեղ, իմ սիրելի,  
Կ'առնում առատ կրամբամբուլի:

Բայց երբ կուզայ, կեանքիս վերջը,  
Մահսէլ առաջիս տեսնեմ,  
Օղին կ'ածեմ բաժակիս մէջը,  
Հոգեհանիսէլ կ'ասեմ:  
Վերջին անդամ, իմ պատուելի,

Ե'կ տուաքացնենք կրամբամբուլի,  
կրամբիմբամբուլի, կրամբամբուլի:

Ք. Պատկանեան



ՊԱՆԴՈՒԽԾ ԱՌ ԿՈՌԻՆԿՆ

Կռնւնկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ.  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Մի վաղեր՝ երամիդ շուտով կը հասնիս.  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Թողեր եմ ու եկեր եմ մըլքերս ու այգիս.  
Քանի որ ախ կ'անեմ կը քաղուի հոգիս,  
Կռնւնկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս.  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Քեզ խապար հարցնողին չիս տանիր տալապ.  
Զայնիկդ անուշ կու գայ քան զջըրի տօլապ.  
Կռնւնկ, Պաղտատ ինոււս կամ թէ ի Հալապ,  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Սըրտերնիս կամեցաւ, ելանք գընացինք,  
Այս սուտ աստընւորիս գարդերն իմացանք.

Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք.  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Աստընւորիս բաներն կամաց կամաց է,  
Միթէ Աստուած լըսէ, գըոնակըն բացցէ,  
Ղարիպին սիրտն է սուգ, աշերն ի լացէ,  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Աստուած, քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ:  
Ղարիպին սիրտն է խոց, ճիկերն է վէրէմ:  
Կերած հայն է լեղի ու ջուրն է հարամ:  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Ոչ ըղլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին.

Զարկած է զիս շամփուրն, բըռնած կրակին.  
Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Պաղտատու կու գաս, կ'երթաս ի սէհրատ.  
Թըղթիկ մի գրեր եմ, տամ քեզ ամանաթ.  
Աստուած թող վըկայ լինի քո վըրադ.  
Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելեաց:  
Գըրեր եմ մէջ թըղթիս՝ թէ հոս մընացի.  
Օրիկ մի օրեր զաշերս չըբացի:  
Միրելիք, ձեզնէ կարօտ մընացի.  
Կռնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
Աշունն է մօտեցեր, գնալու ես թէտպիր.  
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր,  
Ենձ պատասխան չ'տուիր, ելար գնացիր.  
Կռնւնկ, մեր աշխարհէն գընա, հեռացիր:

ԱՌ ԽՐԻՄԵԱՆ Ս. ՀԱՅՐԻԿ

Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք  
Վասպուրական մեր աշխարհ  
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,  
Ցաւերդ դառան բիւր հազար:

Մայիսն եկաւ սոխակներով,  
Վարդի մի թուփ որոնեց,  
Իսպառ փշեց մացառ գտաւ,  
Լալահառաչ ձայն տուաւ:

Հայրիկն ասաց՝ իմ հայրենեաց  
Փուշն անուշ է քան զվարդ.  
Ես այն փշոց մէջը դարձեալ,  
Կը որոնեմ սիրուն վարդ:



Հայրենիք սրբազն,  
Իմ սիրուն աշխարհ,  
Թռչում եմ դէպի քեզ  
Հոգովս անդադար:

Բայց աւազ, այս բանտում  
Փակուած եմ անտես,  
Պատերազմի դաշտում  
Չեմ կուռում և ես:

Հանապազ տանջուեցայ  
Քո ճակատագրով,  
Սրտումն շղթայից  
Վէրքեր կրելով:

Թող այստեղ չարչարուիմ  
Անծանօթ՝ կապուած,  
Միայն քեզ, Հայրենիք,  
Տեսնեմ ազատուած:





«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ  
Յետքից պայծառ գիծ թողեց.  
Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
Միւս անդամ այլ չերևեց»:  
— Ո՞վ իմ դստրիկ, հանգիստ կացիր,  
Դա մեծատան մի աստղ էր,  
Որ իւր օրում, իւր կեանքումը  
Խիզճ ասածը չը գիտէր:  
Ազքաները նորա դռնից  
Դիշեր ցերեկ հալածված.  
Մի մարդ չը կար նորան ծանօթ,  
Որ չը լինէր վշտացած:  
«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ,  
Յետքից պայծառ գիծ թողեց.  
Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
Միւս անդամ այլ չերևեց»:  
— Ո՞վ իմ զաւակ, մի վրդովիր,  
Դա աղջկայ մի աստղ էր.  
Որը իւր հօր ու մօր խօսքը  
Իւր կեանքումը յարգած չէր:  
Նա փախել էր իւրեանց տնից...  
Մուր էր քսել տան վերայ...  
Իւր ծնողքը լացուցել էր,  
Ինչը վատնել անխնայ:  
«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,  
Վայր ընկաւ նա երկնքից.

Հայրիկ, ովի աստղն էր արդեօք,  
Որ զրկուեցաւ իւր տեղից:  
—Ո՞հ գտարիկս, հանգիստ կացիր,  
Կեղծաւորի դա աստղ էր,  
Որ իւր օրում ուղիղ մի խօսք  
Մարդու երբէք ասած չէր:  
Փարիսական իւր ձևերով  
Աշխարհը խաբեց, զարմացուց,  
Այդ պատճառով Աստուած նորա  
Աստղի լոյսը խաւարցրուց.

«Հայրիկ, տես տես, մի աստղ թռաւ,  
Եւ դիմ անդամ չը թողեց,  
Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
Միւս անդամ այլ չերեեց»:  
—Ո՞հ, սիրական, խաղաղ մնա,  
Բռնակալի դա աստղ էր,  
Որ աշխարհը իւրեան գերի  
Ծնած օրից կարծել էր:  
Եատ հալածանք, շատ նեղութիւն  
Պատճառեց նա իւր կեանքում.  
Եատ տուն բանդեց, շատ մարդ զրկեց,  
Դուժ չունեցաւ իւր սրտում:

«Ապա այն ինչ աստղ է, հայրիկ,  
Որ այնպէս պարզ վառվում է,  
Նորա մաքուր պայծառ լոյսը  
Չորս կողմը բակ բռնել է»:

—Ո՞հ իմ դստրիկ, աղջմք արա.  
Դա ծերունու մի աստղ է,  
Որ իւր կեանքում ոչ մի մարդու  
Ոչինչ վնաս տուած չէ:  
Այն լուսաւոր բակն է նորա  
Առաքինի գործերը.  
Աղօթք արա, որ երկարվին  
Նորա կեանքի թելերը:  
Եատ օր չանցաւ, երկնքիցը  
Մի այլ վառ աստղ պակասեց.  
Ո՞վի աստղիկն էր որ ընկաւ,  
Բան հարցանող չ'երեեց:  
Մինչ գեռ լուսինն արծաթափայլ  
Լոյս էր տալիս գիշերին,  
Խորհրդաւոր մինչ տիրել էր  
Անվրդով իսոր լուսվիւն,  
Մի սրտաթափ, մազերն արձակ  
Վազեց աղջիկ սգաւոր  
Դէպ ՚ի գեղի գերեզմանը,  
Ծունկ չըեց մի շիրմի մօտ:  
«Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,  
Դու յաւիտեան քնեցիր.  
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,  
Ինչու անտէր թողեցիր:  
Իմ աստղիկն ասա նոյնպէս,  
Որ չը փայլի՝ հերիք է.

Այս աշխարհը ինձ առանց քեզ,  
 Մութն ու խաւար մի բանտ է»  
 Մի մարդ չըկար, որ նկատէր,  
 Որ հետեւալ գիշերին  
 Պակասեցաւ երկնքիցը  
 Մի պայծառ աստղ իմնդագին:  
 Երրորդ օրը շատ սգաւորք  
 Փորեցին մի գերեզման,  
 Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին  
 Մարմինը խեղճ աղջկան:  
 Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,  
 Ետքից պայծառ գիծ թողեց,  
 Աստղին ընկաւ երկնքիցը,  
 Միւս անդամ՝ այլ չերևեց...»

Առն Էմմանուել (Մ. Նալբանդեան)



Հապա քաջազունք,  
 Հայսց զաւակունք,  
 Առէք աղեղունք  
 Ի մոհ երագունք:

<sup>1)</sup> Այս երգը առնուած է Խրշակ Բ. ալբերգութիւնից:


Անտառը սպասեն  
 Կենդանիք սարսեն  
 Զինուցդ՝ 'ի ձայնէն.  
 Շեշտակի նետեր  
 Թափեցէք քաջեր  
 Յերէս անվեհէր:  
 Վաղեմք ուր վրտանդ,  
 Այս մեր ըզբօսանք.  
 Որսոց արշաւանք,  
 Մարտից են կրթանք,  
 Երթամբ գունդ՝ 'ի գունդ,  
 Ցաղեղ և մըկունդ,  
 Ցուսով սլրտաթունդ,  
 Շամփրեմք կենդանիս,  
 Իբր զթշնամիս  
 Ի մեր հայրենիս:  
 Զի օր մալ նոյնպէս  
 Մարտին՝ 'ի հանդէս՝  
 Զարնեմք մահազեաց  
 Զոսոլիս հայրենեաց.  
 Եւ յաղթանակաւ  
 Լըցեալ աւարաւ,  
 Դառնամք քաջարշաւ:  
 Եւ 'ի մեր դափնիք  
 Ծափ տան սիրելիք,  
 Պանձան հայրենիք:

Ի Մ Ե Ւ Գ Հ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,  
Սերտ բարեկամը անջատած են ինձանից,  
Թառամում եմ ես այս օտար երկրումը,  
Մենակ բըսած ծաղկի նըման դաշտումը:  
Կամաց կամաց տարիները ահցնում են,  
Մեղ նորոգած գարուն, ամառ գարձնում են,  
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,  
Ինձ երեկը իրկնվում է միշտ այսօր:  
Ասպարիզիս նեղ է ճամբան ու փըշոտ,  
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ:  
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի.  
«Դա, ասում են, իր կեանքը մը գարդ չունի»:  
— Ես գարդ ունիմ, գարդը մեծ է ու պէսպէս,  
Բայց չեն տեսնում ձեր աշերը կարծատես:  
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,  
Քանի բողէ բաղդը ժըպտաց ինձ պայծառ:  
Հա, ասացի, գարձել է իմ անիւը,  
Լըրացել է իմ վատ բաղդի շար թիւը»:  
Յանկարծ՝ փշեց անտուրժելի հիւսիսին,  
Թառամեցուց վարդ մանուշակ մայիսին:  
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,  
Իմ անողում, անտորոյն վիճակը:  
Ախ, մօտեցիր օրհասական, օր մահուան,  
Բեր քու հետդ սե հող ու նեղ գերեղման:

Թհնդ սառ լինի իմ նոր տանը յատակը.  
Ծանըր քարէ վլրէս ծածկած վերմակը:  
Բայց, ախ, երբ որ կ'անցնի ամիս ու տարի,  
Կը մամուռտի գերեղմանը այն քարի,  
Հետքը անդամ չի մնալու իմ խաչին.  
Իմ անունը, իմ յիշատակ—կը կորչին:  
Բայց կ'ուզէի թողնել այստեղ մի արձան,  
Որ գարէ գար մընար, ամուր անկործան...  
Ես երգեցի երդ ոլորհն ու անուշ.  
Իմ ընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ,  
Միթէ այնքան անդութ կ'լինի Լետա գետ,  
Որ անունըս անդամ կ'անէ նա անհետ:

Ա. Տ.-Դ. Պատկանեան



ԱՂՋԱՅՑ ԵՐԳ

(Յատ եղանակին. (Ты душа-ль моя,  
Красная-д'евица,  
Ты зв'язда-ль моя  
Ненаглядная).)

Հանդիսատ իմ անոյշ  
Անցար գնացիր:  
Միայն վերք անբոյժ  
Մրտումս թողեցիր:

Սոխակ գեղեցիկ  
 Կանաչ պարտիզում,  
 Երգելով քաղցրիկ  
 Ինձ չէ դրաւում:  
 Քեզանով միայն  
 Երջանիկ էի,  
 Տիկին ինքնիշխան  
 Ինձ կարծում էի:  
 Ցերեկը մենակ,  
 Փակուած սենեակում  
 Ոզբում եմ անյագ,  
 Ոչ ոք չէ լսում:  
 Դիշեր է գալիս —  
 Մահիճ եմ մտնում:  
 Տրտում է հոգիս.  
 Թունտ չէ տանում:  
 Մազեր թուխ, երկայն,  
 Աչեր գրաւիչ,  
 Ի՞նչ հասակ, ի՞նչ ձայն  
 Ի՞նչ հոգի կտրիճ:  
 Ոհ, սիրտը այրուած  
 Ողջ քեզ է կանչում:  
 Ողջ ըստ անմոռաց  
 Անունդ է յիշում:  
 Անգութ. ինձ խարեց,  
 Աւրիշն սիրեց,

Աիս, նա ինձ դեռ վաղ է առ աջ  
 Պատրաստեց դագաղզ:  
 Ա.Ռ Շահագիզեան  

 Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ,  
 Երբ միսս էր գալիս՝ ասում եմ ես ախ,  
 Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ,  
 Աշխ, սիրոս խորվում, ցաւիս չիկայ վերջ:  
 Երբ կարմիր գինին բաժակումն ածած  
 Սեղանիս վըրայ առաջըս է գըրած,  
 Սչըըս ակամայ վըրան եմ ձգում,  
 Զեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:  
 Տեսնում եմ և, ախ, միտքս է մոլորվում,  
 Դառն արտասունքով աչքըս պլզտորում,  
 Կարծում եմ բոլոր աշխարը մթնեց,  
 Արևն էլ խաւրեց, էնդուր որ տիսրեց:  
 Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,  
 Զեր սիրուն աշերն էլ երբ կը տեսնեմ,  
 Էն սե սե աչքերն՝ սե ունքով պատած,  
 Կարծես՝ երկնային զալամով քաշած:

Են սև սև աչերն, որ շատին սպանեց,  
Բայց էլի շատին դըժոխըից հանեց:  
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,  
Առանց կըրակի էրուած, խորոված:

Էլ երբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս.  
Բաղ ու բազայում սէյրան անելիս,  
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում;  
Երբ որ ձեր կարմիր թըշերը տեսնում:

Թըլքուն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝  
Թըշում է, թըշում, ամպերում կորչում  
Եւ իր Արարչի տեսածն ասելիս  
Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է  
կանչում:

Հայոց աղջիկներ՝ ինչ անում տամ ձեզ,  
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,  
Թէ մարդ անուանեմ՝ բէդամաղ կ'անեմ,  
Ուրեմն ինչ անեմ, մոլորուած եմ ես:

Մոլորուած եմ ես օտար աշխարում,  
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,  
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նըման,  
Հայոց աղջիկներ՝ դուք էք աննըման:

Զեր սէրն է միայն սըրտումըս պահած,  
Զեր սիրով միայն եմ ես կենդանի,  
Զեր սէրը միայն էս կեանքըս մաշուած  
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:  
Գեղոր Միւխնեանց

### Շ Ա Յ Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

(Յիֆլիսեցու գանգատներ)

Մէկը, տեհար-շեապայով,  
Քաշած ձեռին շան կաշին,  
Շուշի կտորն աչքերին,  
Լուս ընկաւ քո առաջին:  
Էսէնց է, մօդա է, մօդա է, մօդա է:  
Պետերբուրբումը միթօմ,

Աւարտիլ է իր ուսում,  
Փիլիսօփայ է, կօսես,  
Խուրը տըկէմէն է խօսում:

Էսէնց է, մօդա է, և այլն:  
Մի ձեռը նա փըրվելով,  
Ունի շալվարի ջիբում,  
Կոտրատվելով՝ միւս ձեռով  
Խւզած մաղերն է քօքում:  
Էսէնց է, մօդա է և այլն:

Ու բերնումը ծխելով  
Սատանայի փուրվարը,  
Մէջը կոտրած կատւի պէս,  
Երբ չափում են բուլվարը:

Էսէնց է, մօդա է և այլն:  
Մէկը, տեհնումիս, պոչը  
Թրե է տալիս զայրաթով,  
Կօսես, քուչէրի աւելիլ

Վիր է կալի փօղքաթով:  
 Էսէնց է, մօդա է և այլն:  
 Մէկէն օշխարի նման  
 էգնէն կապիլ է դըմակ,  
 Կոսես, դարբնի մինծ փուքսով  
 Փըշած ըլին իր քամակ:  
 Էսէնց է, մօդա է և այլն:  
 Ա՛խ, էն դամրի պէս գործած  
 Էրեսների էն քուղը,  
 Սապոկների ճռճռոցը՝  
 Քանդում են իմ ըղուղը...  
 Էսէնց է, մօդա է և այլն:  
 Զիմ կանացի, հախ Աստծու,  
 Բարկութիւնն իմ սանձել,  
 Սկսում եմ վայ տալով՝  
 Մեր կնանիքն անիծել...  
 Էսէնց է, մօդա է և այլն:  
 Եդ անիծուած չար մօդան  
 Ել չէ տեսում մէ տարի,  
 Գէլաքնուրի ծախողն  
 Էնքան չունի մուշտարի:  
 Յ. Մէկիմ-Ցակորեան



ՀՈՎՈՒԻ ԴԱՐՁԼ ՍԱՐԻՑ  
 Մնաք բարնվ, մարգեր,  
 Արօտներ փայլուն.  
 Ամառն անցկացաւ,  
 Հօտը գնում է տուն:  
 Մենք էլի կը գանը, կբարձրանանք սարը,  
 Երբ թռչունների կզարթեն երգերը,  
 Երբ ծաղիկները կծածկեն երկիրը,  
 Անոյշ մայիսին կփազեն ջրերը:  
 Մնաք բարնվ, մարգեր,  
 Արօտներ փայլուն.  
 Ամառն անցկացաւ,  
 Հօտը գնում է տուն:  
 Թարգմ. Թարխուդարեանց



ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ

Մայր—Արաքսի ափերով  
 Քայլամնլոր գնում եմ,  
 Հին հին գարուց յիշատակ,  
 Արեաց մէջը պլարում եմ:  
 Բայց նոքա միշտ յեղյեղուկ,  
 Պղտոր ջրով եղերքին.  
 Դարիւ դարիւ խմելով,  
 Փախչում էին լալագին:

Արաքս՝ ինչու ձկանց հետ,  
 Պար չես բռնում մանկական.  
 Դու դեռ ծովը չը հասած,  
 Սըդաւոր ես ինձ նըման:  
     Ինչու արցունք ցայտում են  
 Քու սէգ հպարտ աշերից.  
 Ինչու արագ փախչում ես,  
 Այդ հարազատ ափերից:  
     Մի պղտորիլ յատակդ,  
 Հանդարտ հոսէ խայտալով.  
 Մանկութիւնը ըս կարճ է,  
 Եռւտ կը համնիս դէպ 'ի ծով:  
     Վարդի թփեր թնդ բուսնին  
 Քու հիւրընկալ ափի մօտ.  
 Սոխակները նոցա մէջ  
 Երգեն մինչեւ առաւօտ:  
     Մշտադալար ուսիներ,  
 Սառ ծոցի մէջ ըու ջրին.  
 Ճըկուն ոստըն ու տերեւ,  
 Թնդ թաց անեն տապ օրին:  
     Ափերիդ մօտ եղդելու  
 Հովիւք թնդ գան համարձակ.  
 Գառն ու ուլը ըու վճիտ,  
 Զուրը մտնեն միշտ արձակ:  
     Մէջը ուսցուց Արաքսը,  
 Փըդիուր հանեց իւր տակից,

Ումակի նման գոռալով  
 Էսպէս խօսեց յատակից:  
     «Խիզախս, անմիտ պատահի,  
 Նիրհըս ինչու դարեոր  
 Վըրդովում ես, նորոգում,  
 Իմ ցաւերը բիւրաւոր:  
     «Սիրելիի մահից յետ,  
 Ե՞րբ ես տեսել, որ այլին  
 Ոտքից ցգլուխ ոչնուի  
 Իւր զարդերով թանկագին:  
     «Որի համար զարդարուիմ,  
 Որի աշըը հրապուրեմ:  
 Շատերն՝ ինձ են ատելի,  
 Շատերին ես օտար եմ,  
     Կար ժամանակ, որ ես էլ,  
 Շըքեղազարդ հարսի պէս  
 Հազար ու բիւր պըչըանքով  
 Փախչում էի ափերէս:  
     «Յատակլս պարզ ու վըճիտ,  
 Կոհակներըս ոլորուն.  
 Լուսաբերը մինչեւ այդ  
 Զըրիս միջին էր լոգում:  
     «Ե՞նչըս մնաց այն օրից,  
 Ո՞ր ջրամօտ գեղերըս,  
 Ո՞ր իմ շէն քաղաքից,  
 Ո՞ր բերկրալի տեղերըս:

«Տուրքը ջրի ամեն օր,  
իր սուրբ ծոցէն Արարատ  
Մայրախնամ ինձ սընունդ  
Պարգևում է լիառատ:

«Բայց ես այն սուրբ ջրերով,  
Սուրբ-Ակոբի աղբիւրին  
Պիտի ցօղեմ արտօրայք  
Իմ ատելի օտարին:

«Կամ կենսատու իմ՝ ջրով,  
Ափերիս մօտ կըկըզած,  
Իւր նամազը կատարէ  
Թուրք կամ Պարսիկը հոտած:

«Մինչ իմ որդիք—ով գիտէ—  
Մարաւ, նօթի, անտէրունչ.  
Օտար աշխարհ յածում են,  
Թոյլ ոտքերով, կիսաշունչ:

«Հեռու, հեռու ըլշեցին,  
Բնիկ ազգը իմ Հայկեան.  
Նորա տեղը ինձ տուին,  
Ազգ անկրօն, մոլեկան:

«Դոցա համար զարդարեմ  
Իմ հիւրընկալ ափերը.  
Եւ կամ դոցա հրապուրեմ  
Ճըլուոտ, պլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք,  
Այսպէս կու մնան պանդուխտ՝

ինձ միշտ սրգւոր կը տեսնէք,  
Այս է անխար իմ սուրբ ուխտ»:—  
Էլ չը խօսեց արարուը,  
Յորձանք տուեց ահագին,  
Օղակ օղակ օձի պէս  
Առաջ սողեց մոլեգին:

Ո. Տ.-Գ. Պատկանեան



ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

(Գերմաներէնից)

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,  
Ախորժ, ընտանի իմ հոգու համար՝  
Առաջին դու խօսք, ականջիս հասած,  
Դու սիրոյ բաղրբիկ առաջին յօդուած,  
Մանկական լեզուիս թոթովանք տըկար,  
Հընչում ես իմ մէջ դու միշտ անդադար:  
Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,  
Այդ ինչպէս բազզը հընչում ես ինձ դու:  
Կամիմ աւելի բաջ ծանօթանալ  
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ,  
Ասես թէ ահա կանչում էին ինձ  
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հընչիր դու հընչիր այժմ և յաւիտեն  
Մայրենի լեզու, բարբառ սիրական,  
Արի, բարձրացիր հնութեան փոշուց,  
Դու իմ հայ լեզու, մոռացւած վաղուց.  
Բզեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,  
Որ ամենայն սիրտ վառվի քո սիրով:  
Ամեն տեղ փշում է Աստուծոյ շունչը,  
Սուրբ է այն միւս այլ ձև ու ոճը,  
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,  
Իմ ոըրտի սէրը յայտնել արժան էր,  
Իմ երանական մտածութիւնը—  
Ապա կը խօսեմ իմ մօրըս խօսը:  
Ա. Նազարեանց



Ե Ր Կ Ո Ւ Ք Ա Յ Ց Ր

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,  
Հոգւով գեռ արի, գլխով ալեոր.  
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,  
Ուկի ասացին գիտունը այն դարը:  
Ունէր նա երկու մատաղնաս աղջիկ,  
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ:

Մի օր տգեղը ասաց միւսին.  
«Երթանը ծովի ափ, քոյրիկ միասին»:  
Սիրունը գնաց առաջից արտում  
Տըգեղը ետնից ուս պահած սրտում:  
Հաղիւ թէ ծովի ափին էր հասած,  
Իր սիրուն քրոջ գլորեց նա ցած:  
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.  
«Քոյրիկ իմ, քոյրիկ, փրկէ ինձ մահից.  
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,  
Առ, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանը»...  
—էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ—  
«Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական  
Կուտամ քեզ ոսկի պսակ պատուական».  
—էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դուն բնաւ մի յուսալ.  
«Քոյրիկ, մի թօղնիլ դու ինց անտէրունչ  
Քեզ սիրուն փեսաս կուտամ անտրտունչ»:  
Տգեղի սիրտը դարձել էր ժէռ քար  
Քրոջ ինդիրը թողեց անկատար:  
Զկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,  
Բոնեց մարմինը սիրուն աղջկան.  
Զըրիցը հանեց դրեց ափի մօտ  
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ:  
Մի աշուղ անցաւ, աեսաւ աղջկան,  
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան.

Տարաւ իրան տուն այդ անդին գիւտը,  
 Զորացուց նորա մարմնի դիփ հիւթը...  
 Գեղեցիկ տաւիլ շինեց ոսկերից  
 Քաղցրածայն լարեր հիւսեց մազերից.  
 Երբոր ամեն բան պատրաստեց կարգին,  
 Գնաց արքունիք, տաւիզը ձեռքին.  
 Երբ մըտաւ դահիճ շըեղ զարդարած,  
 Տեսաւ տըգեղին փեսի մօտ կանգնած.  
 Բացեց բերանը, լարերին խիեց,  
 Հիւրերի առջև քաղցրածայն երգեց.  
 «Հնչէ, իմ տաւիլ, հնչէ համարձակ.  
 Հարազատ քոյրըս խլեց իմ պսակ.  
 «Լոէ: իմ ծնող, լոէ սիրական,  
 Հարազատ քոյրըս խլեց իմ փեսան.  
 Լոէ, ժողովուրդ, լոէ անխըռով  
 Հարազատ քոյրըս գլորեց ինձ ծով»:  
 Միւս օրը դահիճը խարոյկ շինեցին,  
 Մահապարտ քըրօջ մէջը գլորեցին:  
 Հուրը պլալաց, աղջկը կանչեց.  
 «Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»:

Պ. Տ.-Գ. Պատկանեան



### ՈՐՍ ԱՐՃԱԿԱՅ

Մեծափառ արքայն մեր  
 Ի յորս կամի ելանել,  
 Լարեցէք աղեղներ,  
 Որպէս մեղ է վայել:  
 Տիրասէր իշխաններ,  
 Պատրաստ եղէք քաջօրէն,  
 Արքայիս դառն ցաւեր  
 Թնդ անդարձ ցրուեն:  
 Հնչեցէք փողերը  
 Անուշաձայն երգերով.  
 Որս Արշակ այն օրն  
 կամի ելանել:  
 Տրոփ ձիուց մեր հնչիւն  
 Ի դաշտն Պարտկաստանի  
 Ցուցանել Հայկազանց  
 Եռանդն ու հոդին.  
 Յառաջ դուք ընթացէք,  
 Ո՛վ քաջաղունք, տալով տրոփ  
 Արձագանք ձեր ոտից  
 Հնչեցին տրնփ, տրնփ:



Մնասցես բարեաւ, սէր իմ, սէր,  
 Հրաւէր մարտին որոտաց՝

Թէ չեմ քաջ ես ընկեր,  
Չկայ բաժին ինձ փառաց:  
Մի լար, հոգւոյս իմ հատոր,  
Դուցէ դառնամ, ո՞հ, մի լար,  
Թանկայ մարտին ես 'ի դու,  
Տեսուք յերկինս մեք զիրեար:  
Եղբայրագուաւ չէ նախանձ,  
Որ բորբոքեալ յիս վառի...

Մ. Թէփկրաւեան



Վ. Ա. Ռ Ժ. Ա. Տ Ո Ւ Ն

«Մայրիկ՝ ինչու այս խեղճը  
Ման է դալիս գըլըլտած,  
Ոտքը բորիկ, գըլմարաց,  
Ինքն էլ գրեթէ միշտ հարբած»:  
— Որդեակ՝ դա էլ քեզ նըման  
Մի օր տըղայ էր փոքրիկ.  
Բայց թողուցին անխընամ  
Ասուան մօտի վատ մարդիկ:  
Չուղարկեցին վարժատուն,  
Բարի խրատ չի տըւին,

Մընաց խեղճը անուսում,  
Ծոյլ ու անդործ բընաւին...  
Ինքըդ դագէ՛, բըրէտէն<sup>1)</sup>  
Օգուտ ունի՛ մեզուանոց:  
Նոյնալէս գիտցիր՝ տըգէտէն  
Երբէք չիկայ շահ մարդոց:  
Այն ժամանակ մեղ կուտան  
Մարդիկ հալաւ, տուն ու. հաց,  
Երբ որ նոքա կ'ստանան  
Մեզանից շահ՝ փոխագարձ...  
Այս պատճառաւ՝ այդ մարդը  
Ման է դալիս գըլըլտած,  
Ոտքը բորիկ, գըլմարաց,  
Ինքն էլ գրեթէ միշտ հարբած:—  
«Մայրիկ՝ չուղեմ ես նըման  
Լինել թշուած այդ մարդուն.  
Այսուհետեւ պիտ երթամ  
Ամենայն օր վարժատուն»:  
Գամառ-Քարիպա



) Բրէտ, մեղուի նման մի տեսակ ճանճ է, որ մեղը չի պատրաստում, բայց, ասում են, սիրում է մեղը զողալ փեթակէն, Զիելին ասատիկ խայթում է. Օքում.

## Մ Ա Յ Ի Ս

Մենք արժանացանք ուրախ մայիսին,  
Ծառեր, ծաղկներ ողջ կանաչեցին.  
Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը  
Ուրախ ու զուարթ առաջ վաղեցին:

Տերևատ ծառի ստուերների տակ  
Թռչուններն իրանց երգերն են երգում  
Կանաչ դաշտերի փափուկ մարգերում  
Պէսպէս կենդանիք ուրախ արածում:

## Ճ Ա Խ Ա Բ Ա Կ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր, սիպտակ մալաչներ,  
Մանիր, թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Զէթ եմ ածել ականջներըդ,  
Նոր շինել եմ շրտուիկ,  
Դէհ շուտ շարժիր լայն թելերըդ,  
Ոստեր շինիր սրուլիկ:

Տիգրանիկս գուլբայ չունի,  
Հանդ է գնում ստաբաց,  
Գաբրիէլս չուխայ չունի,  
Միշտ անում է սուգ ու լաց:

Չուալ չունինք, չաթու չունինք,  
Ո՛չ սամոտէն, ոչ պարան,  
Այսպէս աղքատ գեռ եղած չենք,  
Կտրուել է ամեն բան:

Դեռ հարս էի որ գործեցի  
Քանի կապերտ, խալիչա,  
Բայց գրանցից շուտ զրկուեցի,  
Հիմա չունինք մի քեչա,

Կարմիր օրս երբ սեացաւ,  
Եւ պարտք մնաց, թէև քիչ,  
Պտրտատիրոջ սիրտն էլ սեցաւ,  
Եկաւ տարաւ ամեն ինչ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր, սիպտակ մալաչներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Վ. Աղայեան



ԶԱԳՈՒԿ ԵՒ ԿԱՏՈՒ

Մեր ձագիկը փոսում նստած քընում է,  
Ա՛խ, խեղճ ձագիկ, հիւանդ ես գու,

Որ չես ուղում կուտ ուտել,  
Զագն ուտում է (Յ անդամ):  
Զագիկ մեր շար կատուից զգուշացիք,  
Նա ունի սուր սուր ճանկեր,  
Կարող է քեզ վնասել:  
Զագիկ թռաւ (Յ անդամ):



Յորժամ եղն դարուն՝ արե ծաղեցաւ,  
Հարաւ հողմն հընչեաց, սառն հալեցաւ,  
Երկիր կանչեցաւ, ծառըն ծաղկեցաւ.

Խըմենք, եղբարք, դինի՝ մեզ անոյշ լինի,  
Ածէք, խըմենք դինի, բանն Աստուած շինի:  
Ո՞վ եղբարք, նստեալ էք ծաղկեալ ծառի տակ,  
Չեռներիդ է դինին կարմիր ու յստակ,  
Թասի մէջ անկանի ծաղիկ ըսպիտակ.

Խմենք և այն:

Առէք կարմիր դինի և լցրէք շուտով,  
Բերէք թազայ դառն սինի սարփուշով,-  
Ղաբլու փլաւ ձգէք մեխակով նըշով,  
Խմենք և այն:

Թող չիման տեղ նստիմք, ջուր լինի և խոտ,  
Կարմիր դինի խմենք մէկսմէկի մօտ,

Միմեանց նուիրեմք զվարդ անուշահոտ.  
Խմենք և այն:  
Վաղիւն ոչ գիտեմք՝ թէ զինչ ծընանի,  
Մարդուս կեանքն վայրի ծաղկի նըմանի,  
Որ այսօր բացուել է՝ վաղիւն անցանի.  
Խմենք և այն:  
Նոր գարուն, նոր արե, ծաղիկ շնորհազարդ,  
Այսուհետև բացուի մանուշակ ու վարդ,  
Զայն բիւլբիւլն, տատրակին լսէ ամեն մարդ.  
Խմենք և այն:  
Այլ և խաղաղութեամբ խըմեն է հալալ,  
Ոչ հարբել, գոռալ և ոչ բարկանալ,  
Խմենք և այն:  
Գնա, լայ քո մեղքն, նախաշով Ադամ,  
Աշխարքըս անցաւոր է, չէ մընացական.  
Դուք կերէք, խմեցէք, եղբարք սիրական,  
Եւ օրհնեցէք զԱստուած այժմ և յաւիտեան:  
Աղակ նախաօսի, աօրզ



Ե Ր Գ

Յիշեսցուք 'ի դիշերի զանուն քո լուէր:  
Բղիսեսցեն սիրտք մեր զբան բարի և եղուք մեր  
պատմեսցեն զգործու երկնաւոր թագա-  
տորիդ:

ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք  
զքեղ Տէր:

Զարթս մեր տացուք քեղ Տէր ՚ի գաւիթս  
ըո ՚ի մէջ նոր երուստղէմի:

Ի գիշերի համբարձուք զձեռս մեր սրբու-  
թեամբ առ քեղ Տէր:

Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնե-  
ցէք զՏէր:

Զարթիք փառք իմ, զարթիք, և ես զար-  
թեայց առաւօտուց, ալէ՛լուիս<sup>1)</sup>:

Զարթիք ընդ զուարթունս, մանկունք վերինն  
Սիօնի, ալէ՛լուիս:

Զարթիք, որդիք լուսոյ, ՚ի յօրհնութիւն  
հօրն լուսոյ, ալէ՛լուիս:

Զարթիք, փրկեալք արեամբ, և տուք զփառս  
փրկողին, ալէ՛լուիս:

Զարթիք, նոր ժողովուրդք, նոր երդս առեալ  
նորոգողին, ալէ՛լուիս:

Զարթիք, հարսունք հոգւով, սպասեալք դա-  
լոյ սուրբ փեսային, ալէ՛լուիս:

Զարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն  
սուրբ կուսանացն, ալէ՛լուիս:

<sup>1)</sup> „Ալէլուիս“ բառ երբալեցոց և հալէլուեան:

Ալէլու նշանակում է զովեցէ՛ք. իս, եահ, նշ.—զտէր կամ  
զին, ալէլուիս. օրհնեցէ՛ք զնստուած, կամ զովեցէ՛ք  
զՏէր (երդ փառաբանութեան՝

Զարթիք, պաարաստեցէ՛ք իւղ լապտերաց,  
ջերմ արտասուս, ալէ՛լուիս:

Զարթիք և մի ննջէք, նման յիմար կուսից  
նիրհէք, ալէ՛լուիս:

Զարթիք, երկիրպագցուք և արտասուօք  
զայս ասացուք, ալէ՛լուիս:

Զարթիք, ընդէք ննջես Տէ՛ր, մի մերժեր  
զմեղ իսպառ:

Արի՛ Տէ՛ր օգնեա մեզ, տացուք անուանդ  
քում զփառս:

Այժմ և յաւէտ Հօր, և Որդւոյ, և սուրբ  
Հոգւոյն, ամէն,

Զարթուցեալքս ՚ի զբաղմանէ գիշերային  
հանգստենէ:

Ենորհնեսցէ մեզ մարդասէր Տէ՛ր միիթարու-  
թիւն և ՚ի սփոփանս եկեղեցւոյ:

Ահիւ և դոզութեամբ կացցուք ՚ի յազօթս:  
Եկեալ խոստովանեսցուք զյանցանս:  
Եւ գտցուք ՚ի Քրիստոսէ զքաւութիւն և  
զմեծ զողորմութիւն:

Ներսէս Կրայեցի, կարտիկոս ամենայն ձայոց

### ՍՈՒԳ ԴՄՏԵՐ ՑԵՓԹԱՑԵԱՑ

Յառաւօտ կենաց կուսանիս,  
Յարշալոյս աւուրց անմեղիս,  
Խորշակ մահուան աարածի,  
Ա՛լս, լոյս աչացս պակասի:

ԱՌ ծանօթ լերինք և հովիտք,  
 ԱՌ պայծառ դաշտք ծաղկափթիթք,  
 ԱՀԱ 'ի ձէնջ հրաժարիմ,  
 Փութով երթայց 'ի շիրիմ:  
 Լացէ՛ք զիս, մի անտառք, բըլուրք,  
 Լացէ՛ք հարք, մարք, եղբարք և քորք,  
 Զիս փոյթ զենցէ սուր ուխտին,  
 Յօդուածքս այժմէն սարսափին:  
 Արիւն իմ է գին փրկութեան,  
 Դիցամոլ տանն իսրայէլեան  
 Մեղապարտքն ազատ մըան,  
 Անմեղ կեանք իմ չքանան:  
 Մայր իմ, ախ դու մի՛ շատ ցաւիր,  
 Հօրս ուխտին բնաւ մի՛ ներհակիր:  
 ՅԱստուած բարձրեալն զյոյս բո դիր  
 Բեր զզարդս իմ, մի՛ աըխրիր:  
 Դուք դստերք տոհմին Յակովրեան,  
 Շուրջ զինև կացէ՛ք միաբան,  
 Երգեցէ՛ք զերգս հարսնութեան,  
 Միշտ տօնեցէ՛ք զիմ վախճան:  
 Աստուած մեծ՝ փառք իսրայէլի,  
 Ընկալ զիս իբր գհոտ կընդրկի,  
 Իբրև զզո՞ն Աբէլի,  
 Իբրև որդին Սարբայի:  
 Բաբունեաց վըճիռ համաձայն  
 Ոչ կարաց տալ մահուս խափան.

Լէր դու, Տէր իմ, օգնական,  
 Դու հեշտ արա զիմ վախճան,  
 Եղկելոյս ծընողք ցաւալի  
 Մնացեն առանց զաւակի,  
 Տէր, անւր նոցա սիրտ արի,  
 Մեղմեա զմորմոք դառն վըշտի:  
 Աւանիկ՝ երամք հրեշտակաց  
 Առ երկնիւք կան թեատարած,  
 Զիս հրաւիրեն յԱղին բաց,  
 Զիս կոչեն հարսք հօր փառաց:  
 Նըկարեն քոզն իմ հարսնութեան  
 Փոխարկի ՚ի պատան թազման.  
 Իմ պճնազարդ հարսնարան  
 Եղե այս խոր գերեզման:  
 Ցուցէ՛ք ինձ զիմ մահու դործի,  
 Զսուրք զէն զոհիս արժանի,  
 Արգ՝ ողջ լերուք, սիրելիք,  
 Օրհնեալ է Տէր, պիղծ են դիր:  
 Յ. Վ. Ալամդարեան



Եռշան ջան, քի համա՝ կինքս կես էլաւ,  
 Քու սրտի շահիլը փուչինչով չ'էլաւ,  
 Ի՞նչ գէթ իմ արի քի, ասան, իմ հոքիս.  
 Վուտնիրդ կունընդնիմ՝ միղայ դուքամ քիզ.

7

Էտէնց էլ քարեսիրտ՝ շիս պիտի ըլի,  
Անմիզ տիղը մարթուռ՝ հալ ու մաշ անի,  
Ի՞նչ իս ասում իժում՝ քու խըճալտանքիդ,  
Թէ վուր մատաղ անիս գլուխս՝ պատկըրքիդ:  
Ի՞նչ կուլի մէ ձեն տաս՝ ով իմ հոքէհան,  
Մէ սիրտս խիթարիս՝ չը գաղիս էթքան,  
Քու անուշ բերնեմէն մէ համով խօսկն,  
Չարչարանքիս գիղն է՝ իմ բաղտիս հիմքն:  
Աստուծ սիրունութիւն՝ քի էնդուր էրիտ,  
Վուր օղօրմած ըլիս՝ պարուն սիրեկնիդ  
Վարցկ կօնիս, աշկի լուս, մէ տիսութիւն դաս,  
Է՛ս ջուրը տարածիս, մէ համբուրիլ տաս:



### Գ Ա Ր Ո Ւ Ն

Հ, ինչ անուշ և ինչպէս զով  
Առաւոտուց փըշես հովիկ,  
Ծաղկանց վըրայ գուրգուրալով  
Եւ մաղերուն կուսին փափկիկ,  
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,  
Գնա անցիր սըրտէս՝ ի բաց:  
Ո՛հ, ինչ ազու և սրտագին  
Ծառոց մէջէն երգես թոչնիկ,  
Սիրոյ ժամերն ՚ի յանտառին  
Բզմայլեցան ՚ի քո ձայնիկ.

Բայց չես թոչնիկ իմ հայրենեաց,  
Գընա երգէ սըրտէս ՚ի բաց:  
Ո՛հ, ինչ մրմունջ հանես վըտակ  
Ականակիտ և հանդարտիկ.  
Քո հայելւոյդ մէջ անապակ  
Նային զիրենք վարդն ու աղջիկ,  
Բայց չես վըտակ իմ հայրենեաց,  
Գնա հոսէ սըրտէս ՚ի բաց:  
Թէպէտ թոչնիկն ու հովն Հայոց  
Աւերակաց շրջին վերայ,  
Թէպէտ պղտոր վըտակն Հայոց  
Նոճիներու մէջ կը սողայ,  
Նոքա հառաջը են հայրենեաց,  
Նոքա չերթան սըրտէս ՚ի բաց:

Մ. Պէփկրաւեան



### ԵՐԳ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՛ղջոյն ընդ քեղ Հայաստան,  
Մեր գիւցաղանց գերեզման.  
Ողջայն . . . . .  
Պսակեալ փառօք հայրենի:

Երկինք խրկէ Քեզ հրեշտակ,  
 Բիւր վարդք ծըլին ստքին տակ,  
 Իւր մէկ նայուածքն երկնագեղ  
 Քու արտասուացդ ըլլան դեղ:  
 Ո՞հ, ինչ անուշ նըւագներ  
 Պիտի հնչեն սոխակներ:  
 Երբ քու ճակատդ պսակէ  
 Ծաղկէոնեան դափնիէ:  
 Մանուկն յորոց կը խայտայ,  
 Եւ ծերունոյն սիրտ դնձայ.  
 Երբոր նշոյեր կը ժպտին,  
 Հայ աստեղաց նորածին:  
 Ո՞հ, շիրմացդ քով ալ հանգչի  
 Անմահութեան վեհ ոգի,  
 Մինչ զուարթունք 'ի բարձանց  
 Պսակս սփռեն հայկազանց:  
 Փափուկ մատունքդ թնդ դրօշմեն  
 Այն տառերով ոսկեղէն.  
 Մեր սրտին մէջ «սէր և լոյս»,  
 Մեր հոգւոյն մէջ կեանք և յոյս:  
 Քու վշտերուդ փոխանակ  
 Երկինք կանգնեց յաղթանակ.  
 Քու վէրքերուդ ալ դարման  
 Քեզի Օրէնք չնորհեցան:



Ա. Յ. Ս. Ավագեաց

## ՊԼՊՈՒԼՆ ԱԽԱԲԱՑՐԻ

Ո՞վ դու բարեկամ այրած սըրտերու,  
 Խօսնակ գէւերոյ, հոգեակ վարդերու,  
 Երգէ պըլպուլիկդ, երգէ ի սարէղ,  
 Զանմահ քաջըն հայոց երգէ հոգւոյս հետ.  
 Թագէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,  
 Սըրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունտ առաւ.  
 Ի խաչին թեէն թըռայ ու հասայ,  
 Դըտայ զըեզ 'ի դաշտ քաջին Վարդանայ:  
 Պըլպնւլ, քեզ համար մեր հարքն ասացին,  
 Թէ չէ հաւ՝ պըլպուլ մեր Աւարայրին  
 Եղիշեայ հոգեակն է քաջըրազրուցիկ,  
 Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմիկ,  
 Զըմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,  
 ՅԱրտազ գայ գարունն ի թուփ վարդենեաց,  
 Երգել ու կանչել յԵղիշէին ձայն,  
 Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վարդան,

Հ. Ա. Ալիսան



ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴՈՒ ԵՐԳ

(Գերմանականից)

Ուզիղ գնետունից ես տուն եմ դընում,  
Փողոց, այ փողոց, էդ ինչ եմ տեսնում,  
Այ գնամ թէ ձախ՝ ծուռ են երկուսն էլ,  
Փողոց, տեսնում եմ՝ դու էլ ես հարբել  
Լուսին ջան՝ ուեխըդ ինչի՞ է ծըռած,  
Մէկ աշքըդ կապուել, միւսը կէս բաց.  
Դու էլ ես կոնծել, այ դու անամօթ:  
Ամաշիր ինձնից, վաղուցուան ծանօթ:  
Բա՛ էստեղ, էստեղ,—տես լապտերներն էլ  
Զեն կարող ուզիղ ոտքի վրայ կանգնել,  
Մէկ պարզ են վառում, մէկ՝ սաստիկ խաւար,  
Կամ թէ՝ պատից պատ կըպչում անդադար:  
Ախրէր՝ էս դիշեր ամենքն են հարբել  
Ի՞նչ բան է մենակ մենակ ծոմ պահել,  
Զէ, էդ կը լինի իսաակ դըժութիւն,  
Ուրեմն նորից դառնամ գինետուն:

Թ. Պողոխեանց



Ո՞րն է աշխարհ Հայաստան.

Միթէ սա է Պարսկաստան,  
Որի պատկերն է Սօդօմ և Գօմօր,  
Ընտանի կեանքն է Բաբէլոնեան խմօր.  
Զէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,  
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է:  
Ո՞րն է աշխարհ Հայաստան:  
Միթէ սա է Յունաստան,  
Որ իր բռնութեամբ գերել է աշխարհ.  
Ազգի ճիգն ու ջանքն յաւիտեան կործան.  
Զէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,  
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան.

Միթէ սա է Տաճկաստան,  
Ուր իրաւոնքից կանայքն են զրկուած.  
Կանանցի մէջ կենդանի թաղուած:  
Զէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,  
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան.

Միթէ սա է Ֆրանգստան,  
Որ իր ճոխ զգեստօք տիրել է աշխարհ  
Լուսաւորութեամբ առաջինն է նա:  
Զէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,  
Մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան,  
Ահա սա է Հայաստան,  
Որ իր բաջութեամբ հաւատն ու կրօն  
Պահպանել է մինչև 'ի ցայսօր:  
Հա, հա, հա, հա, հա, ճիշտ է,  
Մեր աշխարհն այս է, մեր աշխարհն այս է,

Մ. Փ.



## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՞վ մեծապանջ դու լեզու,  
Ո՞վ հեշտ բարբառ մայրական,  
Փափկահնչիւն քո բառերուդ  
Նման այլ տեղ արդեօք կմն։  
Դու որ նախ ինձ հնչեցիր,  
Նախ սիրոյ, ոհ, հեշտ խօսքեր,  
Այն նախ զքեղ թոթովելս  
Դեռ իմ մտքէն չէ ելեր։  
Ինչ դառն վիշտ է սրտիս,  
Երբ օտար տեղ ու լեզու  
Բռնի իրեն զիս կը բաշեն,  
Սրտէս արիւն կը հեղու։  
Ո՞հ, զայն օտար ես սիրել  
Բնաւ չեմ կարող 'ի սրտէ

Չէ, այն չէ բաղցր իմ լեզու,  
Որ սիրով զիս կողջունէ:  
Մայրենի անուշ լեզու,  
Կեաց անսպասան, կեաց յաւէտ,  
Կեաց միշտ լեզուդ դու հայկարժան,  
Կեաց ծաղկալից, ծաղկաւէտ:

Յ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ե Ր Գ

(Մարշ նապօլիոն 1-նի)

Ո՞վ երջանիկ օր անկաւ չար Շապուհ,  
Հայոց աշխարհի անհաշտ թշնամին,  
Այժմ վատ պարսիկ ու թշուառական,  
Պիտի հնագանդի մեր արի սրին։  
Կեցցէ վեհ Արշակ, քաջ, առիւծազօր,  
Կեցցէս յաւիտեան, ով դու մեր արքայ,  
Դեռ քո պէս ոչ ոք չէ եղել հզօր,  
Մատաղ քեզ մեր կեանք՝ երկինք են վկայ։



## ԱՂՋԹ ՄԱՆԿԱՆՑ

Ո՞վ, երկնքի երկրի տէ'ր։  
Դու մեր բարի Հայր։  
Խնդրում ենք բեզ, մաղթանքներս ընդունիր,

Եւ չնորհիր բարի միտք,  
Որ լաւ ուսանինք,  
Եւ բարի լինենք:



Պարտիզումը վարդեր բացուած կ'սպասին  
սոխակին,  
Առանց սոխակ թառամած կարօտ են  
պսակին.  
Արդեօք ովէ, դուռն է թակում, ախ սիրտս  
կը դողայ.  
Իմ սիրուհին ուր է գնում, ախ սիրտս  
կը դողայ:  
Բացուիր, բացուիր, իմ նազելի  
Սիրահարիս աչերը ինձ համար կարտասւին:  
—  
Գետակի ալիքները գնում են խայտալով,  
Սիրահարի աչերը նայում արտասուելով:  
Արդեօք ովէ...

Թիթեռը ճրագի մօտ շրջում է անդադար,  
Մինչ իր վերջ սիրակարօտ չ'ունի նա օր  
դադար.  
Սիրուհին տանը նստած սպասում է եարին,  
Քնարը ձեռն առած՝ նուագում լալագին:  
Բացուիր, բացուիր և այլն:



Վ Ե Ր Զ Ի Ն Վ Ա Ր Դ

(Գերմանականից)

Վերջին վարդ, վերջին վարդ,  
Սիրականիս վերջին զարդ.  
Նա քեզ հանեց իւր կրծքից, { կրկնէ.  
Ինձ պարգևեց վերջին վարդ:  
Մանկութեան ոսկէ ժամերն  
Անցել են անդառնալի,  
Կորած սիրոյս յիշատակ, { կրկնէ.  
Դու ես միայն, վերջին վարդ: { կրկնէ.  
Գարնան օրերն անցել են,  
Տօթ ամառն է ինձ էրում,  
Միշտ սպասում եմքու տեսքին, { կրկնէ.  
Դուն ամառուան վերջին վարդ: { կրկնէ.  
Երջանիկ կեանքիս օրերը  
Ցաւ են դառել առաջիս,

Ուրիշ օրեր, ուրիշ կեանք ։ { կրկնէ,  
Միտքս բերիր, վերջին վարդ։ { կրկնէ,  
Շատ չի տեիլ՝ կբացուի  
Առաջիս սե գերեզման,  
Էս աշխարհից միայն ըեղ ։ { կրկնէ։  
Հետո կասնում, վերջին վարդ։ { կրկնէ։

Բ. Պատկանեան



### ԵՐԳ Ա.Ի.ԱԶԱԿԱՅՑ

Վառեց երկինք իւր լապտեր  
Աւազակաց համար,  
Հնչեն հողմունք փոթորիկ,  
Աւազակաց համար,  
Մեր պալատն է անտառ։

Խ մ բ ա պ ե ս.

Երբ—որ մեռնիմ, ով ընկերներ,  
Գինիներով խօսք տուէք որ՝  
Լի բաժակներ ձեռներիդ՝  
Գաք ու պարէք շիրմիս բոլոր.  
Եւ առ ՚ի զոհ մեծ բաւութեան՝  
Հոգւոյս բարի պաղատելով՝  
Պիտի ցողէք իմ գերեզման գինիներով.

Գինիներով հարիւր բաժակ,  
Գինիներով հարիւր տակառ,  
Գինիներով, գինիներով։



Ա. Դ. Ք. Ա. Տ Կ Ի Ն

(Գաղղիերէնից)

Ճուրտը փչեց, ձմեռ սաստիկ.  
Զիւնը ծածկեց գետինը,  
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,  
Պատսպարվիլ ցրտիցը։  
Ժամի գռնում գողգողալով  
Կանգնած է մի աղքատ կին.  
Նորա հանդերձը պատառ պատառ,  
Չունի շապիկ իւր հագին.  
Անհամարձակ նա իւր ձեռքը  
Պարզում է անց կացողին—  
«Ողորմութիւն արէք, պարոն։  
Անտուն, անտէր աղքատին»։  
Զեզ, սիրելիք, ասեմ ով եր  
Այս խղճալի աղքատը,  
Այն ցրտումը ոտաբորիկ  
Կանգնած, ժամի գռնումը.

Շատ ժամանակ դեռ չէ անցել,  
Երբ նա փառքով ու պատռով  
Ման էր գալիս փողոցներում  
Իւր սեպհական կառքերով.  
Այժմ, վախով նա իւր ձեռքը  
Պարզում է անց կացողին—  
«Ողորմութիւն արէք, պարն,  
Անտուն, անտէր աղքատին»։

Մինչ թատրոնում յայտնվում էր,  
Մինչ խաղում էր հանդիսում,  
Դղոգում էր թէատրոնը,  
Նա դափնիր շատ էր հնձում.  
Փողովուրդը հաւաքվում էր  
Մոտ թատրոնի պատշգամբին,  
Զէր կշտանում նայել նորա  
Քնքոյշ, չքնաղ երեսին,  
Այժմ նորան չեն ճանաչում,  
Մոռացել են բընաւին—  
«Ողորմութիւն արէք, պարն,  
Անտուր, անտէր աղքատին»։

Ամենայն օր նորա դռնում,  
Կանգնած էին շատ կառքեր.  
Միշտ հասկերոյթ, ընթրիք, գինի,  
Նուագարան ու տաղեր.  
Ամենայն ոք ցանկանում էր  
Լինիլ նորան բարեկամ։

Ամենայն ժամ նորան բաց էր  
Շոայլ քսակը մեծատան.  
Այժմ զրկված ամեն բանից,  
Չունի անգամ հացի գին—  
Ողորմութիւն արէք, պարն,  
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր իւր մարմինը  
Անուշահոտ ջրելով  
Լուանում էր, մազը սանրում  
Կրիայի սանըրով.  
Նա հագնում էր բեհեղ, կերպաս,  
Դիպակ, թաւիշ թանգագին.  
Նը չգիտէր ինչ ասել է  
Արծաթի կարօտութիւն,  
Այժմ անլուայ, մազերն արձակ,  
Չունի հագուստ թէև հին—  
«Ողորմութիւն արէք, պարն,  
Անտուն, անտէր աղքատին»։

Նորա շքեղ ննջարանում  
Բնակվում էր Աստղիկը,  
Նորա որդին փայփայում էր  
Նորան ամբողջ գիշերը...  
Ախտաբորբոք երիտասարդը  
Իւրեանց անձը երջանիկ  
Կը հաշուեին, եթէ լինէին  
Նորա ձեռքում խաղալիք...

Այժմ փողոցում քնում է նա  
Խօնաւ պատերի տակին—  
«Ոզորմութիւն արէք, պար՞ն,  
Անտուն, անտէլ աղքատին»  
Ժամի դռնում նա կանգնած է,  
Աշքերը կօր, վիզը ճուկ.  
Նորա նախկին բարեկամքը  
Չեն ասում նորան, «խղճնել.  
Ե՛կ դու մեր մօտ, մեր կ'ամրոքենք  
Քո վիճակի դառնութիւն.  
Կը թուլացնենք ճակատագրիդ  
Խիստ հարուածի սաստկութիւն»:  
Նա տանում է տառապելով  
Այս սոսկալի վշտերին—  
«Ոզորմութիւն արէք, պար՞ն,  
Անտուն, անտէլ աղքատին»:

Կոմս Էմմանուէլ (Միքայէլ Նալբանդեանց)



Քոն էղիր, պալաս, աչքըդ խուփ արա,  
Նախշուն աչքերուդ քուն թող գայ վըրայ.

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունի) <sup>1)</sup> քունը կը տանի:

Օսկի խաչ վիզիդ՝ ըեղի պահապան,  
Նարօտ կապիլ է ծայրէն տէրպապան:

Օր օր օր պալաս, օր օր ու նանի:  
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Մազի հիլուններ կախել եմ ես ալ,  
Նազար չես առնուլ, քուն էղիր, մի՛ լալ:

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Աս քանի՛ մօրըդ անքուն աչքովը  
Անցել է օրեր օրոցըիդ ըովը:

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) քունը կը տանի:

1) Զոր օրինակ. իմ Արամիս, Խղիսաբէթիս և այն.

Օրոցքը օրքիմ, օրով բոյ բաշիս,  
Մըզկըտան ծանով սիրտը չի մաշիս:  
Օր օր օր պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) քունը կը տանի:  
Դուն-ալ քուն էղիր, ինձի ալ քուն տնւր,  
Սուրբ Աստուածամայր (այս անունին) քուն  
տնւր:

Օր օր օր պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) քունը կը տանի:



### Պ Ա Ն Դ Խ Տ Ի Ե Ր Գ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,  
Դու հայրենիք, քեզ յիշելով կ'արտա-  
սուեմ:  
Զը կայ ծնող, չը կան որդիք, քոյր, եղբայր,  
Զիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ.  
Օտար երկիր, արև, աստղեր և լուսին,  
Թէե պայծառ՝ ինձի խաւար կը թուխն:

Բնակարանս՝ տխուր պանդոկ օտարաց,  
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:  
Ուր է հայրս, ուր է մայրս քաղցրանուն.  
Ուր զաւակունքս, ուր սիրելիքս սի-  
րասուն:  
Սակայն ունեմ քովս թիսուս, փրկէ զիս:  
Նա օտար չէ, նա իմն է, սիրէ զիս:



## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Լ Ո Ւ Բ Ի Կ



Առաւտուն թունդիր մուխ,  
Կլոր աշքեր, ընքեր թուխ,  
Աժիր, Մուշն ու Բուլանուխ:  
Լուրիկ, ջանըմ լուրիկ,  
Բարիսեմ, լուրիկ, լուրիկ,

Առաւտուն երկու մարդ,  
Աչքս առաւ էղաւ դարդ.  
Դու կումանիր քեաֆուր վարդ:

Գացինք արտեր բռնինք լոր,  
Աղջիկ տեսանք եայլի ձոր,  
Նման էր կարմիր խնձոր:

Առաւտօտ բարի լուսուն,  
Քո խալան հարիւր յիսուն  
Վերցի զարկի վըր քուրսուն:

Առաւօտ թափիր փոշին,  
իմ դօշն առնի, քո դօշին,  
ինչ որ հալուէն մըչ լօշին:

Իրիշկէ դէմ աղօթրան,  
Դաշտ կբանի ձեր գութան:  
Քընց զըմէն քաղցր է վաթան:



Ա Ր Ա Զ

Արագն եկաւ լափին տալով,  
Ժեռ քարերին ափին տալով,  
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,  
Չոր գլուխս, տափին տալով:

Այ իմ Արագ, ջուրդ վարար,  
Տիրուն եարիս եարար տեսմը.  
Ես չհասայ իմ մուրազին,  
Արագ, եարար կարօսս առմը:

Ամպերն ընկան Մասիս սարին,  
Կարօտ մնացի ես իմ եարին,

Աստուած սիրես, Էրուած սրտիս  
Ջուղապ բերես եկող տարին:

Գիշերն անքուն գիր կդրեմ,  
Արտասուքս գետ կըշինեմ,  
Արագ, ծէգը ջրիդ չառած,  
Իմ ու գարդը բեղ կբերեմ:

Կասես շողըը քարին ընկաւ,  
Կրակն իմ սրտին ընկաւ,  
Կամար ունքից, թուխ աչքիցը,  
Ցաւն իմ ջիւան ջանին ընկաւ:

#### 6. Ծովիաննիսեան



«ԿՈՅՐ ԱՇՈՒԿԴ»-ից

Այս, երբ իմ էլ աչքը բաց էր,  
Տեսնում էի ամեն բան,  
Զեղ պէս ես էլ, ով պարոններ,  
Ուրախ էի մշտական:

Տեսնում էի ես ծաղկազարդ  
Ինձ միշտ ծանօթ բլուրներ,

Կարկաչահոս վտակ զուարթ  
Հեռանում և գնում էր:

Ես հիացմամբ տեսնում էի  
Արարչագործ բնութիւն,  
Արծաթափայլ չքնաղ լուսին  
Եւ ոսկեշող արեին:

Բայց ախ, հիմայ ով սիրելիք,  
Չեմ տեսնում և ոչ մէկին.  
Ոչ արեգակը պայծառիկ,  
Եւ ոչ աստղեր, ոչ լուսին:


Ո՞հ, իմացէք, հայ եղբայրներ,  
Ականջ արէք բան ասեմ:  
Չեր խեղճ եղբարց բաշած վշտեր,  
Եւ նեղութիւնը ձեղ պատմեմ:

Ես այլեւ չէի տեսնում  
Թալանած տունն հայ մարդի,  
Ականջներս էր միայն լուս  
Անիրաւ ձայնը քրդի:

«Վերցրու Հասան, ասում էր նա,  
Այս գեղեցիկ աղջկան.  
Վերցրու և դու հետը գնա  
Դէպ' իմ սպիտակ չագիրը»:

... Ա՛լա, երանին էր իմ ձեռին  
Փոխանակ այս բնարս,  
Լինէր հրացան, վառօղ, գնդակ,  
Բողէմ տեսնէր աշերս...

Գ. Ա.



ԽԱՆՈՒՄ ԵԽԱ ԶԱՆ

Երդիցը դուրս ելա Ալա-  
գեազ տեսայ,  
Խանում Եւա ջան,  
Աբարան աշբերիս դուման  
ա դառել.  
Դուն կեցիր բարով,  
Ես կերթամ լալով.  
Լալով ողբալով,  
Քոչ ու բարխանով,  
Սարեր մանդալով:

Ոչխարն էս դին կարծայ, էնդին գառները  
Կանչցեր են ծաղիկները, ծառները:  
Արի երթանք քու մանգալած արտերը,  
Քեզի տեսայ, թաժացան իմ դարդերը:

Զեռ ու ոտս կապին՝ բերդը դրեցին,  
Չուխա, շալուար լալով տունը բերեցին։  
Ես Աղէկն եմ Զամոլեցի մէկ ջիւան,  
Տութսաղ էղայ ըստուց չօւրի Երևան։



Դէհ շուտ արի, ախ շուտ արի,  
շուտ արի.

Նոր լէհինդ դեռ մի' կարի,  
շուտ արի.

Դէհ շուտ արի, ախ շուտ արի  
շուտ արի.

Թող խնոցին էգուց հարի  
շուտ արի.

Դէհ շուտ արի, ախ շուտ արի,  
շուտ արի.

Բոնի ձեռքից դու քո եարի,  
շուտ արի.

Դէհ շուտ արի, ախ շուտ արի,  
շուտ արի.

Քեզի պէտք չէ դանձն աշխարհի,  
շուտ արի.

Դէհ շուտ արի, ախ շուտ արի,  
շուտ արի.

Ինչպէս լինի, հնարք ճարի,  
շուտ արի.

Դէհ շուտ արի, ախ շուտ արի,  
շուտ արի.

Դու ինձ այդքան մի չարչարի,  
շուտ արի.

Դէհ շուտ արի, ախ շուտ արի,  
շուտ արի.

Ինձ մի խփի դու չոր բարի, շուտ արի,  
Դէհ շուտ արի, ախ շուտ արի,  
շուտ արի.

Սպասում եմ, շուտ դուրս արի,  
մօտս արի.



Քէ գնա կիդամ, վայ գնա կիդամ, շուտ  
կիդամ,

Նիշուն միզարս առնիմ յիդամ, շուտ  
կիդամ:

Դէ գնա կիդամ, վայ գնա կիդամ, շուտ  
կիդամ:

Կարմիր սօլերս հաղնիմ իդամ, շուտ  
.. կիդամ:

Խօրօս բըճելս առնիմ իդամ, շուտ կիդամ։  
Դէ գնա կիդամ, վայ գնա կիդամ, շուտ  
կիդամ,

Գլխուս լաշին առնիմ իդամ; շուտ կիդամ։  
Դէ գնա կիդամ, վայ գնա կիդամ, շուտ  
կիդամ,

Թափալիկներս առնիմ իդամ, շուտ կիդամ։  
Դէ գնա կիդամ, վայ դնա կիդամ, շուտ  
կիդամ։

Միզրիս կապերն առնիմ իգամ, շուտ կիգամ։  
Դէ գնա կիգամ, վայ գնա կիգամ, շուտ  
կիգամ,

Երեսնոցներս առնիմ՝ իդամ, շուտ կիդամ։  
Դէ գնա կիդամ, վայ գնա կիդամ; շուտ  
կիսամ։

Դեղ ու դեղպիրս առնիմ իդամ; շուա  
կիդամ:



ՊԱՆԴՈՒԽԾ ՄՇԵՑՈՒ ԵՐԳՆ



օթն օր, եօթն գիշեր,  
Եալսկամնի գօտիս թոռմեր,  
Եալ մզիկ դառնէն դուրս չելնայ,  
Փշուրմի սկրտ մըզիկ խովսայ—  
Վասէ, վալէ, վալէ, վալէ...

Ելքամ Ատանեսոլ,  
 Դագիմ փարա բոլ,  
 Իմ եազի համար  
 Առնիմ ջուխտ մի սօլ.  
 Արի՛, եար, արի՛,  
 Խոռվ մի կենայ,  
 Աստուռըիս բան՝  
 Եար, մզիկ չի մնայ:

Առնիմ զտանբուրէն  
Յելնամ քու մամու յէրթիս,  
Զիմ կարգու անուշ ձէննի լսիս,  
Եար, անուշ ընէդի զարթիս:  
Վայլէ, վայլէ, վայլէ...  
Կայներ ես յիգին՝  
Խաղող կու քաղես,  
Շամամ ծծերով՝  
Շաբար կու մաղես.

Ալմաստ բիչաղով՝  
Զիմ սիրտ կու դաղես.  
Արի, եար, արի և այլն:

Վայ, սանխէր Կիվկիվ,  
Դու գացիր ի Մուշ բարով,  
Ել չըս յիգայ հազար տարով,  
Խարս պարկե տղայ ըերէ,  
Առջնեկ լէ գութան կու վարէ —  
Վայլէ, վայլէ, վայլէ...

Քամբախ Բուլանըխ  
Ինչ անուշ գեղ է,  
Երկուսս մէ շապիկ՝  
Փողպատնի նեղ է,  
Եարիս մէ պագնի  
Սրտիս ի գեղ է:  
Արի, եար, արի և այլն:

Մկօրսի քամբախ էրկրէն,  
Խաբրիկ մէ էկեր —  
Թ' Տաճիկ լցուեր գեղ,  
Ջըմմէն թաներ ու տարեր,  
Վայլէ, վայլէ, վայլէ և այլն:  
Խայեր, վախ, Խայեր,  
Շիւարէք մացեր,

Զիմնաք մըր էրկրէ  
Լացերն ու թացեր:  
Արի, եար, արի և այլն,



### Ա Զ Ո Ւ Ե Ր Գ Հ

Ես ի՞նչ կենեմ կով ու կթան,  
Որ մենք չունինք չուժ ու գութան:  
Ազի, ազի, ազի, ազի,  
Ազու գարդերն էր սարերով  
Անուշ, անուշ, անուշ, անուշ:  
Զահէլ եմ, ջիւան եմ, չեմ երթայ  
Ազի ջան: (Կրկնել տների վերջում):

Անարատ կաթ Աստուածածին,  
Դու սաղ պահէ նանու բալին:

Արեն ելաւ կամար կամար,  
Էս լուրն էլաւ մեղի համար:

Ել մենք չունինք միսիթարանք.  
Երկնուց գետին ընկանք, կորանք:

Սամնայ սարերը փուս էր,  
Խեղճ մշեցուն աշքի լոյս էր:

Խաչը տարան քցին ջուրը  
Նոր եկաւ մեղի էս լուրը:

Ղշերն էկան ծառին թառան  
Անուշ բալիս ձեռնէս առան:

Էլ գիրանս, մեր տուն չկայ  
Գիշերն աչքերս էլ բուն չի դայ:



Երթիկ, երթիկ բռնել ես,  
Երթկայ տակին կռնել ես.

Տուն արի, տուն արի, տուն արի եար  
Մթնել ա, տուն արի, անջիրար եար:  
Կանչըմեմ, եար արի, եարալու եար:

Չէն տուի՝ ձէնս չառար,  
Մազեամ լնձէն ջորիլ ես:

Չուն դնեմ թաւէն խաշեմ,  
Ելնեմ երթիկը աշեմ  
Տեսնեմ եարս դալիս ա,  
Չոքեմ չաքմէքը քաշեմ:

Հանդէն դաս գեղը մտնես,  
Իմ քյած տեղը մտնես.  
Ընձէն գիւման եար բռնես,  
Բեմուրատ հողը մանես:

Ծառներ, դուք ծիրան միք տայ,  
Ճղներ, դուք էլ բար միք տայ,  
Ես զարիք եմ, զոնախ եմ,  
Դարդերս իրար միք տայ:



### Հ Ա Բ Ի Բ Ա Ն

Հաբրբան. Էսօր ամպ ա պարզում չի,  
Սիստակ դէյրեն սազում չի,  
Օխտը տարի ալ հագնիս, ջանէ ջան,  
Ոիրտդ սե ա սազում չի:

Պուճուր աղջիկ զալում ես,  
Մազերդ սղալում ես.

Ամեն ինձի տեսնելիս, ջանէ ջան,  
Ազբով ունքով անում ես:

» Ամպելա բութա-բութա  
Կերածդ կարմիր թութա  
Ես սիրել եմ, ես կառնեմ, ջանէ ջան,  
Թող գեղով ասեն սուտ ա:

» Կայնել ես ախա-պախայ  
Եայլուզիդ տուտը կախա  
Սե-տղայ, սիպտակ աղջիկ, ջանէ ջան,  
Բռնել են իրար եախայ:

» Արազն յընցայ էն կուռը,  
Քաղեցի դաստայ նուռը,  
Ես չեմ առնի էն ծուռը, ջանէ ջան.  
Կերթամ կընկնիմ սև ջուրը:



### ԼՈՒՍԱԿ ԴՈՒ ԱՆՑԻՐ ԳՆԱ

Լուսնակ, դու անցիր գնա,  
Հօյ, նազանմ նազանմ,  
Կանդ առ դու անցիր գնա,

Գիւլ նազանմ նազանմ,  
Եար ջան գուն բարով արի՛,  
Կանաչ սարերով արի՛  
Կարմիր սօլերով արի՛:

Երբ որ տեսնես իմ եարին,  
Բարե տուր անցիր, գնա:

Երկեն դոմը սալած է,  
Ալ ձին մէջը նալած է,  
Ալ ձին նալը ինչ կ'անէ,  
Սիրունը խան ինչ կ'անէ:

Վարդի ծառին փուշ կըլի  
Նուշի ծառին նուշ կըլի.  
Էրնեկ էն աղջկանը,  
Սիրած եարին դուշ կըլի:



### ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Լուսնակն անուշ հովս անուշ  
Վայ լէ, լէ, լէ, լէ,

Վայ լօ, լօ, լօ, լօ, լօ:

Եինականի քունն անուշ, Վայ լէ...  
Ծագեց լուսնակն երկնուց,

Հովուի փողն էր անուշ, Վայ լէ...  
 Հոտաղն եղներ կարածայ, »  
 Մաճկալ պառկեր քունն անուշ »  
 Ջղղղուն քամին կըփէ, »  
 Ծոփային հողմն էր անուշ: »  
 Դաշտեր, ծովեր մնջեր են, »  
 Ջրեր գլուխն ձէնն անուշ, »  
 Հաւքեր թրսան իրանց բուն, »  
 Բլբուլի տաղն էր անուշ: »  
 Անմահական. հոտ բուրէր, »  
 Քեափուր վարդի հոտն անուշ: »



ԾԱՄԵՐԴԻ, ԾԱՄԵՐԴԻ.

Ծառի վերայ բացուել է կարմիր վարդը,  
 Քեզի դուրսպան ես կը տանեմ քու դարդը.  
 Ծամերդ, ծամերդ,  
 Շեկոյ ջան մաղերդ,  
 Սիրունիկ ունքերդ:

Զօր ու գիշեր կըաշեմ քու կարօտդ  
 Զմեռնէի քիչ մնայի քու մօտդ. Ծամերդ,  
 Ծամերդ...

Լալէն. աչքերիս մէջն է ցաւն ընկել  
 Քո սիրովդ ես շատ դռներ եմ ընկել:  
 Ծամերդ, ծամերդ...


Թէկուղ հոգիս էլ որ յելնի բերնիցս  
 Քո անունդ դուրս չեմ հանի մտքիցս:  
 Ծամերդ, ծամերդ...

Քանի անդամ ձեր դռներէն անցել եմ,  
 Ջեռքս դուան վրայ դրած լացել եմ.  
 Ծամերդ, ծամերդ...



Ծառիս տակը մանուշակ,  
 Ջան գիւլում՝ ջան ջան,  
 Իմ եարլքանց քեզ շիշակ,  
 Ջան ծաղիկ՝ ջան ջան,  
 Ութ թռումանից անց կենամ,  
 Ջան գիւլում՝ ջան ջան,  
 Քեզ կ'անեմ եարիս մշակ,  
 Ջան ծաղիկ՝ ջան ջան:  
 Խնձոր ունիմ կծած ա,  
 Ջան գիւլում՝ և այլն:  
 Զորս կողմն արծաթած ա.  
 Աղքերս ուզեց, տուի ոչ,  
 Աղիղ եարի զլկած ա:

Զուրը դալիս ա լավի տալով,  
 Երկու խնձոր ծափ տալով.  
 Հորէն եարս դալիս ա,  
 Ալ դդակը թափ տալով:  
 Իմ ախտէրս ծառի տակին,  
 Սաղմոսը կաան տակին,  
 Սաղմոսը անգիր է արել,  
 Լեզուն բիւրելու է դառել:  
 Մեր գրանը ուռի ծառ,  
 Ուկէ կաքաւ վըրէն թառ.  
 Երթայր ու դայր օրօր տայր,  
 Ալւան ծաղիկ տանիլ տայր:  
 Անձրեւ եկաւ շաղալէն,  
 Ուռու տերեւ դողալէն.  
 Հրէս եկաւ իմ ախտէրն,  
 Ալ ձին տակին խաղալէն:  
 Մեր գրան առաջին մի դարան  
 Աղջկերքն եկան նի դառան.  
 Շատ խաղացին ու շարուեցան,  
 Շարած մարդարիտ դառան:





Յընցաւ տարին հայոցս էլ փառքն յընցաւ  
 հետ,  
 Դրախտի սարէն գարունն յետին բարեն ետ:  
 Կտրիճք առած զէնքերն, իջան տակ հողին,  
 Վախ մեր գլխուն, սև մուր եկաւ էն օրին:  
 Հայու աչքեր թող մեզի լան,  
 Ա՛խ մեզ լան, վախ մեզ լան:  
  
 Հայեր, գերի եղանք բաղդին անողոք,  
 Աստուած, հրեշտակ, մարդ շաեց մեր բողոք,  
 Մեր լալելու ձէն ծածկուաւ Տարնոյ տակ,  
 Մշու դաշտեր պահէն սրտիս հառաչանք:  
 Հայու աշուղք թող մեզի լան,  
 Ա՛խ մեզ լան, վախ մեզ լան:  
  
 Մատղաշ աղջիկն ու հարս հալաւ մի չունի:  
 Որ իր մարմին անօրէնի դէմ ծածկի,  
 Էնպէս դրած ձեռքերն աշից ամշկոտ,  
 Գութի սիրոյ ողորմութեան է կարօտ:  
 Հայ աղջիկներ թող մեզի լան,  
 Հայու հարսներ թող մեզի լան:

Կեցէք, Մշու դաշտի քամիք գուր կեցէք,  
 Մեր որբերու բարեն էլ ձեր հետ տարէք,

Ու երբ ընցնիք սուրբ օրէնքի կամարից,  
Հոնկուց ըսէք խարիպ մեր հայ աղբերից:  
Էլ ինչ պէտք է, որ մեզի լան,  
Աշխ մեզ լան, վախ մեզ լան:

Մացէք բարով, իմ հեր ու մեր, քուր, ախպէր.  
Մացէք բարով ծանօթ սարեր ու դաշտեր,  
Գուցէ մեռնիմ էլ չտեսնիմ այսուհետ,  
Դարդ մի էնէք. դուշման տարեր եմ իմ հետ:



### ՉՈՒՐ ԵՐԲ ՄՆԱՄ

Չուր երբ մնամ գէլու դռներ,  
Երթամ դանիմ զիմ խեղճ գառներ,  
Սուքեմ զիմ պաղայի ծառներ.  
Զարթիր լաօ: մըռնիմ քղի:

Գրող տանի քուրդ Հասօյին,  
Սպանել է ջոջ Ափոյին,  
Խլաճ մացեր Արաքօյին,  
Զարթիր լաօ, օգնէ Խային:

Դէն իշկէ գալողն ով է,  
Քայ Արաբօն բաղդասոր է,

Կարմիր իրիցանց զինւորն է  
Զարթիր լաօ, մըռնիմ քղի:

Խեղճ մշեցին մնաց լալով,  
Հեռու երկրներ ման դալով,  
Մեռաւ թուրքի պարտքը տալով,  
Զարթիր լաօ, մըռնիմ քղի:

Սեփիլ, շիւան, մացած հայեր,  
Եղած անտէր բնաւ հաւքէր,  
Տէր, գու փրկէ, պահէ՛ արթուն:  
Զարթիր լաօ, օգնէ խայուն:



### ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Սուրբ Կարապետ քո վանքը,  
Վայ լէ, լէ, լէ, լէ, լէ,  
Վայ լէ, լէ, լէ, լէ, լէ,  
Վայ սիրելի շան:

Ղաղախի նախշուն թամբը,

Սրտովը սիրել ես

Բոլորը թորկեր ես.

Վայ անուշիկ ջան:

Արդ էնեմ թագաւորին,

Անցել է Հայի կեանքը:

Ու ամպերը պարզում չի,

Սիպտակ եալուզ սազում չի,

Եօթը տարի ալ հագնեմ,

Սիրտս սև է սազում չի,

Ծիրան եմ ծառի ծերին,

Կերերամ հետ թերերին,

Էկան բաղեցին տարան,

Ծախեցին ախմախներին:

Կաքաւ եմ քարամիջում,

Կ'կարդամ ձորամիջում,

Աստուած, իմ մուրազս տուր,

Էս դալող շաբթու միջում:

Դու մի հատ թառլան զուշ ես,

Մեր բաղում բուսած նուշ ես:

Աստուած վկայ առւտ չկայ,

Ինձ համար շատ անուշ ես:

Անունդ կարդացող ա,

Ախպէրդ գիր բացող ա.

Մի գիր բաց անել տուր,

Տեսնենք ոնց իմացող ա:



### Ս Ի Ր Ո Ւ Ն Ե

Սիրուն է, Արագի խոր ատէքը,

Կողբայ դոլաղ գեատէքը,

Նստել են այգիները,

Ասում են լաւ դայդէքը:

Գութանը հոլ ա, հոլ ա,

Գութան քաշողը տոլ ա, տոլ ա,

Տօլ ես՝ տօլութիւնդ արմ:

Քո խօսքին նայող չկայ:

Մարալ, մարալ մտն արի,

Զէյրան, չէյրան տուն արի,

Մթնել է, չուտ տուն արի,  
Մենակ եմ, չուտ տուն արի.

Կովի հօրթը կապեցիր,  
Նստար կաթը կթեցիր,  
Կաթն ու կարագը մեղրած՝  
Եարիս փէշքէշ դրկեցիր:



### ԱՍԼՈՒ ՏՐՑՈՒԽՆՁԲ

Քանի մէկ բորբոքուիմ, քանի մէկ վառուիմ,  
Մայրիկ, ծւր է սրտիս միխթարանքը,  
Հէյ նազանմ հէյ, ջանանմ հէյ,  
Ումուղմ հէյ, սիրելիս:

Տայ Աստուած, որ ես էլ մեռնիմ սպառուիմ,  
Այսուհետեւ ինչո՞ւ է պէտք իմ կեանքը:  
Չէ՛, չէ՛, աղբեր, չէ՛, չէ՛,  
Ջանմ չէ՛, չէ՛, հոգիս, չէ՛ սիրելիս:

Երանի էր ինձ չծնէիր, մայրիկ,  
Չունենալիր ինձ պէս տարաբաղդ աղջիկ,

Դուք էլ ինձ հետ եղաք իսեղճ, ապերջանիկ,  
Մաշեց, քանդեց մեղի դառն փորձանքը:

Ասլին եմ, չփոխուաւ իմ օրս լաւի,  
Կարմունջ դառայ ես հոգսերի ու ցաւի...  
Եթէ Աստուած չկամենայ, յիրաւի,  
Զի կատարուի ոչ մի մարդու բաղձանքը:



### «Բ Ա. Ա. Շ Ի Թ Ի Ն...»

Քանաքեռ բարձր տեղ ա, ասօն  
Բալա շիրին, ամման, ամման,  
Զուրը հիւանդի դեղ ա,  
Թառլան շիրին, ամման, ամման,  
Բալա շիրին, ամման, ամման<sup>1)</sup>,  
Սիրած սիրածին չեն տայ,  
Էս ինչ անօրէն դեղ ա:

Ա՛յ տղայ սև չուխաւոր,  
Սաղմոսը ծոցիդ սաւոր,

<sup>1)</sup> Հետևեալները երգել այս տողերի նման:

Երնակ կ'տամ էն օրը՝  
Մեր տունը դաս թագաւոր:

Այ տղայ, բաղովն արի,  
Ոտներդ շաղովն արի',  
Էս թաղը զալմազալ ա,  
Ման տուր էն թաղովն արի'։



ՏԱՆՀՄ են, ՏԱՆՀՄ են, ԱԴԻ ԶԱՆ <sup>1)</sup>

Քեապապս աղ եմ արել,  
Ջիգեարս դաղ եմ արել,  
Դօստ ու դուշմանիս միջին,  
Լացս ծիծաղ եմ արել։

Ինձի զատեցին մեր տանից,  
Ազգական—բարեկամից.  
Նոր աշխարհ են ինձ տանում,  
Հեռու եմ էլից—գիւնից։

Սբախս դարտերը խոր ա,  
Տունը մերը չի', նոր ա,

<sup>1)</sup> Կրկնել իրաքանչիւր տողից լետու

ԲԵԳԱՍՐՊ մարդի ձեռից  
Հուրն յաւիտեան ես կորա:

ԲԵՌՆԵՐԾՎ կազ եմ բերել,  
Քեղ ոոկէ մազ եմ բերել,  
Հինդու անդին քարերից  
Գլխիդ փարուաղ եմ բերել։

Իմ եարը տիրացու է,  
Յատուկ տէրտէրացու է,  
Մազերը որ վեր ունի՝  
Մի գեղի քեօխվացու է։

Մեր աւուն շատացել է,  
Եարս անհետացել է,  
Քանի վախտ ա չեմ տեսել,  
Դարդերս թազացել է։



Հ Ա Տ Ե Ղ Ա Ն Ա Կ Ի Ն

«Գնաց, գնաց»

Մնա, մընա, սիրելիս, մնա,  
Դու քո աշխարհից հեռու մի գնա,  
Մի թողուլ ինձ դու խեղճ, անտէր,  
Առանց քեզ աշխարհս ինձ համար բանտ էր։  
Աննման ես դու, դու չես հողեղէն,  
Մնա դու ինձ մօտ, հրեշտակ լուսեղէն։

Ո՞հ, դու ես չքնաղ թագուհի,  
Արևելեան փայլուն աստղիկ ես,  
Ընտրած ինձ գեղեցկուհի,  
Կանաչ դաշտերի գալաք ծաղիկ ես:  
Աննման ես դու և այլն:

Իմ ինչիս պէտք են ոսկիներ,  
Վուզեմ քո սըռսուռ ծամերդ երկար,  
Առանց քեզ ոե են իմ օրեր,  
Կործանվի թէկուզ հենց բոլոր աշխարհ:  
Աննման ես և այլն:

Այ, դու իմ սիրուն աղաւնեակ,  
Քո նախչուն թևերդ չուտով բաց արա,  
Սիրելուս չալ չալ աշերը  
Իմ փոխանակ դու գնա, պաշ արա:  
Աննման հո և այլն:



Գ Ե Ր Զ



ՀՀ Ազգային գրադարան



NL0370108

73.252

891.99-192  
212.39